

Ա.Ռ.ՊԱՊԻԿՅԱՆ

ԾՐԱԳԻՐ

**ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՅԿԱՅՄԱՆ**

ԵՐԵՎԱՆ 2016

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մանկավարժական պրակտիկան ապագա մասնագիտական պատրաստության, հետագայում տարբեր տիպի ժամանակակից ուսումնական հաստատություններում ուսումնադաստիարակչական աշխատանքները հաջողությամբ իրականացնելու համար անհրաժեշտ անհատական ստեղծագործական հնարավորությունների ձևավորման կարևորագույն օղակներից է: Այն հանդիսանում է ուսանողների տեսական և գործնական պատրաստության կապող օղակը, ուսուցման որակի բարձրացման և պրոֆեսիոնալ մանկավարժական վարպետության ձևավորման նախապայման:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասնագետների պատրաստման համակարգում անփոխարինելի նշանակություն ունի հանրակրթական դպրոցներում կազմակերպվող մանկավարժական պրակտիկան:

Մանկավարժական պրակտիկան հանդիսանում է ֆիզիկական դաստիարակության մասնագետի պատրաստության ողջ համակարգի անբաժանելի մասը, որի շնորհիվ ամրապնդվում և կատարելագործվում են ինստիտուտում տեսական և գործնական պարապմունքների ընթացքում ստացած գիտելիքները, կարողությունները և հմտությունները:

Մանկավարժական պրակտիկան պետք է կրի կրթադաստիարակչական արտահայտված բնույթ: Պրակտիկայի ընթացքում անհրաժեշտ է լրացնել և հարստացնել ուսանողների տեսական գիտելիքները, սովորեցնել նրանց օգտագործել ինստիտուտում յուրացրած գիտելիքները և լուծել գործնական խնդիրներ: Մանկավարժական պրակտիկայի արդյունքը մեծ չափով պայմանավորված է ինստիտուտի և բազային դպրոցի կոլեկտիվի համատեղ աշխատանքով, դպրոցի ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի կողմից կիրառվող առաջավոր մանկավարժական փորձով, ուսանողների պատրաստության մակարդակով, դպրոցում առարկայի դասավանդման ավանդույթներով և իհարկե պրակտիկայի ծրագրի բովանդակությամբ: Պրակտիկայի ընթացքում ուսանողները յուրացնում են ուսուցման և դաստիարակության կատարելագործման մեթոդները, դասավանդման առաջավոր փորձը, մատաղ սերնդի դաստիարակության համակարգում ֆիզիկական կուլտուրայի նպատակամետ միջոցները:

Մանկավարժական պրակտիկայի ժամանակաշրջանը նպատակահարմար է օգտագործել նաև ուսանողների հետազոտական խնդիրների լուծման համար: Ուսանողները ամբիոնի կողմից ստացած առաջադրանքների համաձայն կարող են կատարել իրենց ամբիոնների գիտահետազոտական պլանով նախատեսված աշխատանքները: Մանկավարժական պրակտիկան ուղղված է նաև ապագա մասնագետի անձի ձևավորմանը: Ուսանողներից պահանջվում է իրագործել ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի լիիրավ ողջ գործունեությունը:

Մանկավարժական պրակտիկայի ողջ ընթացքը և նրա դաստիարակչական բնույթը պետք է ուղղված լինի ուսանողների մեջ ձևավորելու հասարակական գործունեության պահանջ, ուսումնադաստիարակչական և զանգվածային աշխատանքների վարման կարողություններ և հմտություններ: Պրակտիկայի ընթացքում ուսանողները համարվում են դպրոցի մանկավարժական կոլեկտիվի անդամներ, ենթարկվում դպրոցի կարգ ու կանոնին, ընդգրկվում դպրոցի ուսումնադաստիարակչական ընդհանուր պլանի իրականացման աշխատանքներում, պահպանում աշխատանքային կարգապահությունը: Որպես մանկավարժական կոլեկտիվի անդամներ նրանք ակտիվ մասնակցություն են ունենում մանկավարժական խորհրդի նիստերին, մեթոդական միավորումների աշխատանքներին և այլն:

Մանկավարժական պրակտիկան օժանդակում է քաղաքացիական ինքնագիտակցման, մասնագիտական պատասխանատվության, մանկավարժական գործունեության նկատմամբ հետաքրքրության, երեխաների նկատմամբ սիրո և հոգատարության ձևավորմանը: Մասնագիտության ձևավորման և ուսումնադաստիարակչական գործընթացի իրականացման այդ ժամանակաշրջանում հատկապես կարևոր է ուսանողության ինքնակրթության խթանման, ակտիվության, ստեղծագործական մոտեցման կարևորության գիտակցումը: Մանկավարժական պրակտիկայի ժամանակ ուսանողները անց են կացնում ֆիզիկական կուլտուրայի դասեր, սեկցիոն պարապմունքներ, կազմակերպում ու անցկացնում են ֆիզկուլտուրային առողջարարական միջոցառումներ, մարզական աշխատանքներ և տոնական միջոցառումներ:

Ուսանողի հետ մեթոդիստի և ֆիզկուլտուրայի ուսուցչի աշխատանքի հիմնական ձևը կոնսուլտացիաներն ու մեթոդական պարապմունքներ են, որոնք հնարավորություն են ընձեռնում նպատակային ձևով ղեկավարել նրանց մասնագիտական կարևոր կարողությունների, քննարկումների, դասախոսությունների, ֆիզիկական կուլտուրայի փորձառու ուսուցիչների հետ հանդիպումների, փորձի փոխանակման և այլ միջոցառումների կազմակերպումը: Այդ պարապմունքների նպատակն է օժանդակել ուսանողների գործնական կարողությունների և հմտությունների ձևավորմանը, ընդլայնել և խորացնել նրանց գիտելիքները, դպրոցում իրականացվող դաստիարակչական աշխատանքների վերլուծությունը: Մեթոդիստը ուսումնադաստիարակչական կոնկրետ խնդիրներ է առաջադրում ուսանողներին, մեթոդական օգնություն է ցույց տալիս դասերը և դաստիարակչական միջոցառումները կազմակերպելու համար, իրականացնում է վերահսկողությունը ինչպես առանձին առաջադրանքների, այնպես էլ պրակտիկայի ողջ ծրագրի կատարման գործում:

Մանկավարժական պրակտիկայի ընթացքում ուսանողների հաջող աշխատանքի կարևոր պայման է հանդիսանում նրանց գործունեության ճիշտ պլանավորումը:

Պլանավորման ելակետային փաստաթուղթը պրակտիկայի ծրագիրն է: Յուրաքանչյուր բրիգադում մեթոդիստները, ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների հետ համատեղ մշակում են պրակտիկայի աշխատանքային պլանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պրակտիկայի ծրագրում ընդգրկված են միայն օրինակելի առաջադրանքներ, աշխատանքային պլանը կազմելիս այն պետք է կոնկրետացնել ստեղծագործաբար:

Մանկավարժական պրակտիկայի կազմակերպման գործում մեծ նշանակություն ունի ուսանողի գործունեության վերահսկողությունն ու գնահատումը, որը կատարվում է բոլորնյան համակարգին համապատասխան:

Մանկավարժական պրակտիկայի արդյունավետության հիմնական պայմաններն են տեսական հիմնավորվածությունը, ուսուցանող և դաստիարակող բնույթը, բովանդակության և կազմակերպման համալիր մոտեցումը, սիստեմայնությունը, համակարգվածությունը և հաջորդականությունը: Մանկավարժական պրակտիկայի ժամանակ ուսանողները իրկանացնում են աշակերտների ճանաչողական գործունեության ղեկավարումը, իրականացնում են դաստիարակչական աշխատանքներ, դրանք նպատակաուղղելով նրանց ինքնադաստիարակմանը: Լայն հնարավորություններ են ստեղծվում ուսանողներին անհարժեշտ մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորման համար, ընդլայնվում է նրանց ինքնուրույն ստեղծագործական աշխատանքների ծավալը: Մանկավարժական պրակտիկայի ընթացքում ուսանողները սովորում են ինքնուրույն անցկացնել ֆիզիկական կուլտուրայի դասերը, մասնակցել ամրացված դասարանի աշակերտների դաստիարակչական աշխատանքներին, կազմակերպել մարզական զանգվածային և ֆիզկուլտուրային առողջարարական միջոցառումներ, սովորում են վերլուծել ուսումնական դասերը, կազմել ուսումնամեթոդական փաստաթղթեր, ուսումնասիրում են սովորողների անհատական առանձնահատկությունները: Արդյունքում ուսանողի մոտ ձևավորվում է մանկավարժին անհրաժեշտ պրոֆեսիոնալ կարողություններ և հմտություններ: Այդ կարևոր գործընթացին ուսանողներին նախապատրաստելու համար ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտում ուսումնական գործընթացը և մանկավարժական պրակտիկան նպատակաուղղված են պրոֆեսիոնալ մասնագետների պատրաստմանը: Ուսումնական պլանով նախատեսված առարկաների հետ մեկտեղ ուսանողը պարտադիր կերպով անցնում է նաև մանկավարժական պրակտիկա: Մանկավարժական պրակտիկան անցկացվում է առկա ուսուցման III կուրսում (VI կիսամյակում) տեսական գիտելիքների, մանկավարժական կարողությունների և հմտությունների ձևավորման նպատակով, որոնք անհրաժեշտ են հանրակրթական դպրոցում ուսումնադաստիարակչական և արտադասարանական աշխատանքները կազմակերպելու համար:

Բոլոնյան ծրագրին, տարիքային ֆիզիոլոգիային ու հոգեբանությանը և ընդհանուր մանկավարժությունում ընդունված դրույթներին համապատասխան, մանկավարժական պրակտիկայի արդյունավետ անցկացման համար առաջին անգամ ծրագիրը կազմվել է երեք տարիքային խմբերի պահանջներին համապատասխան, ինչպես ընդունված է հանրապետության կրթության համակարգում՝ կրտսեր դպրոց (1-4-րդ դասարաններ), միջին դպրոց (5-9-րդ դասարաններ) և ավագ դպրոց (10-12-րդ դասարաններ): Ժամանակակից մանկավարժության և ֆիզիկական դաստիարակության տեսությունում ընդունված նորարարական մոտեցումները ներառված են ծրագրում, մասնավորապես նախատեսում են տեսական և սպորտայնացված դասերի, ֆիզկուլտուրային առողջարարական աշխատանքների համապատասխան իրականացումը: Այն առաջադրում է համապատասխան ձևով կազմակերպել մանկավարժական պրակտիկան, իսկ վերջինս ենթադրում է մշակել բովանդակությանը համապատասխան ձևով մանկավարժական պրակտիկայի անցկացման յուրահատկությունները:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ

Մանկավարժական պրակտիկան ֆիզկուլտուրայի ապագա ուսուցչին նախապատրաստում է հետևյալ նպատակների իրականացմանը.

1. Ճանաչողական նպատակ՝ ծանոթացնել ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների մանկավարժական գործունեության բովանդակությանը և կառուցվածքին:

2. Ուսումնամեթոդական նպատակ՝ ձևավորել պրոֆեսիոնալ մանկավարժական իրազեկության բազա, ինչպես նաև ուսանողի ուսումնական, դաստիարակչական, մեթոդական, մանկավարժական հետազոտական գործունեություն իրականացնելու պատրաստություն՝ ֆիզիկական դաստիարակության գործընթացում:

3. Փորձարարական նպատակ՝ ձևավորել անձնական մանկավարժական գործընթացը, որպես տեսական և գործնական գործունեության միասնականություն՝ մոդելավորելու և իրականացնելու ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի մասնագիտական կարողությունները, զարգացնել մանկավարժական առաջնային բանիմացությունը:

4. Դաստիարակչական նպատակ՝ ֆիզիկական դաստիարակության գործունեության նկատմամբ հետաքրքրությունների խթանում, մանկավարժական լիակատար բազայի ձևավորում:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մանկավարժական պրակտիկայի խնդիրներն են՝

1.Ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի մասնագիտական գիտելիքների ընդլայնում ու ամրապնդում, մանկավարժական գործունեության նկատմամբ ստեղծագործական հետաքրքրությունների և դրդապատճառների ձևավորում:

2.Տարբեր տեսակի ուսումնադաստիարակչական աշխատանքների համակարգերին ծանոթացում:

3.Ուսանողների ինքնուրույն աշխատանքի կարողությունների ձևավորում, ինքնակրթության ապահովում:

4.Ուսումնական և արտադասարանական աշխատանքների պլանավորման գնահատման, ինքնագնահատման կարողությունների մշակում:

5.Ինքնուրույն, ուսումնական, դաստիարակչական, մեթոդական, հետազոտական մանկավարժական գործունեություն իրականացնելու միջոցների մշակում:

5.Ուսումնադաստիարակչական գործընթացի ախտորոշման և մոնիտորինգի իրականացման, ուսումնական արդյունքների կանխատեսման կարողությունների մշակում:

6.Քարոզչական և մասնագիտական կողմնորոշման աշխատանքների կազմակերպում և անցկացում:

7.Մանկավարժական գործընթացի ուսումնասիրման և վերլուծության կարողությունների ձևավորումը:

9.Ֆիզկուլտուրային զանգվածային, առողջարարական միջոցառումների նախատեսում, կազմակերպում և անցկացում:

10.Սովորողների նկատմամբ տարբերակված և անհատական մոտեցում ցուցաբերելու, նրանց տարիքային և անհատական առանձնահատկությունների ուսումնասիրության և հաշվառման կարողությունների ձևավորում:

11.Մարզական զանգվածային, ֆիզկուլտուրային առողջարարական միջոցառումների անցկացում հանրակրթական և ավագ դպրոցներում, վարժարաններում, որոնք ունեն ֆիզիկական կուլտուրա առարկայի դասավանդման լավագույն ավանդույթներ:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ.

1.Ֆիզիկական դաստիարակության գաղափարական ուղղվածության պահանջմունքները՝

- ռազմահայրենասիրական,
- անձի ներդաշնակ և համակողմանի զարգացման,

- հետագա գործունեության և հայրենիքի պաշտպանության:

2. Մասնագիտական պատրաստվածության մակարդակի բարձրացման պայմանների ապահովումը.

- հոգեբանական,
- մանկավարժական,
- հասարակական-քաղաքական

3. Պրակտիկայի ընթացքում գործունեության պատասխանատվության, հետևողականության, հաջորդականության, համակարգվածության պահպանումը:

4. Յուրաքանչյուր ուսանողի կողմից իր գործունեության գիտակցումը, պրակտիկայի մեթոդիստի, ուսուցչի և դասղեկի կողմից ուսանողի նկատմամբ ամենօրյա ուշադրությունը, աջակցությունը:

5. Գիտելիքների և կարողությունների նպատակային կիրառումը:

6. Ուսանողների անհատական առանձնահատկությունների, հակումների, հետաքրքրությունների, բնավորության, խառնվածքի, ստեղծագործական կարողությունների հաշվառումը:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԲԱԶԱՆԵՐԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ.

Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի մանկավարժական պրակտիկայի բազա է համարվում նյութատեխնիկական պայմաններ ունեցող հանրակրթական դպրոցները, դրանցում աշխատող ֆիզկուլտուրայի ուսուցիչները, որոնք ընտրվում են Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի պրակտիկայի բաժնի կողմից: Պրակտիկայի խումբը կազմվում են տարբեր մասնագիտություն ունեցող ուսանողներից: Պրակտիկայի ժամկետը, դպրոցների, մեթոդիստների և ուսանողների խմբերի կազմը, ուսանողների քանակը հաստատվում է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի ռեկտորի հրամանով: Ուսանողների քանակը պետք է լինի յուրաքանչյուր խմբում 8-12 մարդ: Ուսանողների մանկավարժական պրակտիկան անցկացվում է համաձայն պրակտիկայի ծրագրի, հանձնարարությունների կատարման ձևով: Մեթոդիստներ են ընտրվում Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի պրոֆեսորադասախոսական անձնակազմից և հանրակրթական դպրոցներից հրավիրված լավագույն ուսուցիչները: Մանկավարժական պրակտիկայի կազմակերպումը և ղեկավարումը դրվում է ինստիտուտի ղեկանների, պրակտիկայի բաժնի և ամբիոնների վարիչների, իսկ անմիջական ղեկավարումը և հսկողությունը խմբի ղեկավարի վրա:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի մանկավարժական պրակտիկան իրականացվում է համաձայն ինստիտուտի և դպրոցի կողմից կնքված պայմանագրի: Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի ուսումնական մասը սահմանում է պրակտիկայի մեթոդիստի, հրավիրված մեթոդիստի, դպրոցի ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի և դպրոցի տնօրենի ուսումնական բեռնվածության չափը:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Բարձրագույն մանկավարժական ուսումնական հաստատությունում բակալավրի կրթական ծրագրին և Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի ուսումնական պլանի ժամանակացույցին համապատասխան մանկավարժական պրակտիկան նախատեսվում է երրորդ կուրսի երկրորդ կիսամյակում: Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի առկա ուսուցման բաժնում մանկավարժական պրակտիկային հատկացվում է 8 շաբաթ 240 ժամ (13 կրեդիտ), համապատասխան հանրակրթական դպրոցի ուսումնական ռեժիմի: Ուսումնական հաստատությունը իրավասու է ելնելով նպատակահարմարությունից պրակտիկայի անցկացման ժամկետները տեղաշարժել ուսումնական տարվա ընթացքում պահպանելով տևողությունը և բովանդակությունը:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

1. Մասնակցել ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի պրակտիկայի բաժնի կողմից կազմակերպված մանկավարժական պրակտիկայի ներգրավիչ և ամփոփիչ կոնֆերանսներին:

2. Պրակտիկանտները պարտավոր են ներկայանալ դպրոց ուսումնական պարապմունքների սկսվելուց 10-15 րոպե առաջ և մեթոդիստի հետ աշխատել մինչև տվյալ օրը նախատեսված աշխատանքների ավարտը:

3. Պրակտիկանտները պարտավոր են ենթարկվել դպրոցի ընդհանուր կանոնակարգին, ռեժիմին, կատարել մեթոդիստի, ֆիզկուլտուրայի ուսուցչի, տնօրենի և ուսմասվարի հրահանգները:

4. Յուրաքանչյուր պրակտիկանտ պարտավոր է կազմել և անցկացնել կցված դասարանի համար նախատեսված այն բոլոր պահանջները, որոնք նախատեսված են մանկավարժական պրակտիկայի աշխատանքային պլանով:

5. Իրականացնել ամենօրյա մեթոդական օգնություն դասերի անցկացման, արտադասարանական տարբեր միջոցառումների կազմակերպման հարցերում:

6. Պրակտիկայի ավարտից 2 օր առաջ պրակտիկաները մեթոդիստին է ներկայացնում պրակտիկայի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ իր հաշվետվությունը (պրակտիկանտի տետրը):

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐԻ (ՄԵԹՈԴԻՍՏԻ) ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Մասնակցել մանկավարժական պրակտիկայի նախապատրաստական կազմակերպչական և ամփոփիչ կոնֆերանսներին:

2. Պրակտիկայի անցկացման նպատակով դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցչի հետ ուսանողներին բաշխել ըստ դասարանների:

3. Կազմել ուսանողների ուսումնական պարապմունքների և արտադասարանական դաստիարակչական աշխատանքների ժամանակացույցը:

4. Ապահովել հանրակրթական դպրոցում դասավանդող այլ առարկաների հետ կապը և օգտագործել այն պրակտիկայի ընթացքում:

5. Պարբերաբար դիտել և վերլուծել պրակտիկանտների կողմից անցկացվող դասերը:

6. Կանոնավոր ստուգել և գնահատել ուսանողների գրած կոնսպեկտները, անցկացրած դասերը, կազմած փասթաթղթերը, պլանով նախատեսված մյուս աշխատանքները:

7. Ժամանակին հայտնաբերել և վերացնել պրակտիկայի կազմակերպման, անկացման ժամանակի հայտ եկող թերություններն ու բացթողումները:

8. Յուրաքանչյուր օրվա վերջում ամփոփել և վերլուծել օրվա կատարված աշխատանքները:

9. Հավաքել և վերլուծել պրակտիկանտների հաշվետվությունները:

10. Մասնակցել յուրաքանչյուր շաբաթվա ամփոփիչ նիստին և վերլուծել պրակտիկայի արդյունքները, ուսանողների հաճախումները և այլ հարցեր:

11. Հետագա օգտագործման նպատակով վերլուծել և ընդհանրացնել դրական փորձը և ուսանողների մանկավարժական պրակտիկայի կազմակերպման բնագավառում նորարարությունները:

12. Պրակտիկայի ավարտից հետո ֆակուլտետի ղեկավարներին ներկայացնել հաշվետվություն կատարված աշխատանքների մասին:

13. Կատարված աշխատանքների արդյունքով ֆակուլտետի պրակտիկայի ղեկավարի հետ գնահատել ուսանողին:

**ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՂ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.**

1.Մասնակցել պրակտիկայի նախապատրաստման, ներգրավիչ և ամփոփիչ կոնֆերանսներին:

2.Հաճախել պրակտիկայի բազա և ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների հետ վերլուծել ուսանողների կողմից անցկացրած դասերը:

3.Ուսանողների համար մշակել աշակերտի անձի ուսումնասիրման հոգեբանամանկավարժական հանձնարարություններ:

4.Օժանդակել ուսանողներին կազմելու աշակերտների հոգեբանամանկավարժական բնութագրերը, ստուգել և գնահատել դրանք:

ԴՊՐՈՑԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՐՍՈՒՐԱՅԻ ՈՒՍՈՒՑԶԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.Մասնակցել ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի պրակտիկայի բաժնի կողմից կազմակերպվող մանկավարժական պրակտիկայի ներգրավիչ և ամփոփիչ կոնֆերանսներին:

2.Ուսանողներին ծանոթացնել ֆիզկուլտուրայի ուսուցչի մանկավարժական գործունեության բովանդակությանը և հիմնական ուղղություններին:

3.Ուսանողների համար կազմակերպել բաց և ցուցադրական դասեր, արտադասարանական պարապմուքներ, նրանց հետ համատեղ կազմակերպել և անցկացնել ֆիզկուլտուրային առողջարարական և մարզական զանգվածային աշխատանքներ, դաստիարակչական միջոցառումներ:

4.Օգնել ուսանողներին դասերի, արտադասարանական պարապմուքների և դաստիարակչական միջոցառումների նախապատրաստման և իրականացման հարցերում:

5.Մասնակցել պրակտիկանտների անցկացրած դասերին, արտադասարանական պարապմուքներին և դաստիարակչական միջոցառումներին, վերլուծել դրանք:

6.Ուսանողներին մասնակից դարձնել դպրոցում անցկացվող ֆիզկուլտուրային և մարզական, քարոզչական աշխատանքներին:

**ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ (ՖԱԿՈՒՆԵՏԻ) ԴԵՎԱԿԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.**

1.Ապահովել հաստատության կամ ֆակուլտետի մանկավարժական պրակտիկայի պլանավորումը, կազմակերպումը, իրականացումը և արդյունքների ամփոփումը:

2.Ընտրել համապատասխան դպրոցներ (բազաներ) պրակտիկան բարձր մակարդակով անցկացնելու համար և ուսանողներին բաշխել ըստ դպրոցների:

3. Կազմել մանկավարժական պրակտիկայի մասին հրամանի նախագիծ:

4. Վերահսկել պրակտիկան, յուրաքանչյուր շաբաթ կազմակերպելու հանդիպումներ մեթոդիստների հետ, կատարված աշխատանքներին ծանոթանալու նպատակով այցելել բազաներ:

5. Պարբերաբար կազմակերպել մեթոդական խորհրդակցություններ մեթոդիստների և ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների համար:

6. Տեղեկացնել դեկանատներին պրակտիկայի ընթացքի, ուսանողների հաճախումների, թերությունների և նրանց վերացման անհրաժեշտության մասին:

7. Մեթոդիստների հետ համատեղ որոշել խմբի լավագույն պրակտիկաներին և խրախուսել նրանց:

8. Կատարված աշխատանքների արդյունքով մեթոդիստների հետ նշանակել ուսանողների ամփոփիչ գնահատականները:

9. Պատրաստել հաշվետվություն պրակտիկայի կազմակերպման, անցկացման, ուսանողների առաջադիմության մասին:

ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԺԱՄԵՐԻ ԲԱՇՆՈՒՄԸ ԸՍՏ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԵՎ ԹԵՄԱՆՆԵՐԻ

N	ԲԱԺԻՆՆԵՐԸ ԵՎ ԹԵՄԱՆՆԵՐԸ	ԺԱՄԵՐԻ ՔԱՆԱԿԸ			
		Ընդամենը	Անհատական	Ինքնուրույն	Խմբակային
1	ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	16	2	4	10
	Մասնակցություն մանկավարժական պրակտիկայի ներգրավիչ և ամփոփիչ կոնֆերանսներին	2	---	---	2
	Ծանոթանալ պրակտիկայի բաժնի, գործնական ամբիոնների և գրադարանի կողմից պատրաստված պրակտիկայի անկյունի բովանդակության հետ	2	---	2	---
	Մանրամասն ուսումնասիրել մանկավարժական պրակտիկայի ծրագիրը, փասթաթղթերը և պրակտիկանտի տետրը	2	---	2	---
	Մասնակցել պրակտիկային վերաբերվող բոլոր միջոցառումներին	2	---	---	2
	Հանդիպում դպրոցի տրնոթենի և մանկավարժական կոլեկտիվի հետ	2	---	---	2
	Հանդիպում ֆիզկուլտուրայի ուսուցչի հետ	2	---	---	2
	Հանդիպում ամրացված դասարանի դասղեկի հետ	2	2	---	---
	Հանդիպում դպրոցի բուժաշխատողի հետ	2	---	---	2
2	ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	180	54	100	26
	Փասթաթղթերի կազմում	30	10	14	6
	Դասերի դիտում և անցկացում	40	8	30	2
	Դասի մանկավարժական վերլուծություն	4	2	---	2
	Արտադասարանական պարապմունքների կազմակերպում և անցկացում	26	10	16	---
	Մարզական զանգվածային (սպորտլանդիաներ, մրցումներ և այլ տոնակատարություններ) աշխատանքների կազմակերպում և անցկացում	20	6	8	6
	Ֆիզկուլտուրային առողջարարական միջոցառումների կազմակերպում և անցկացում`	12	4	6	2
	• նախապարապմունքային մարմնամարզության անցկացում (ամրացված դասարանում)				
• ֆիզկուլտ րոպեի անցկացում					
• շարժախաղեր և ֆիզիկական վարժություններ երկարացված դասամիջոցներին					
• ամենօրյա ֆիզկուլտուրային պարապմունքներ երկարօրյա խմբերում					

	• ամենամյա առողջության և սպորտի օրեր				
	Հանրակրթական առարկաների դասալսում	4	---	4	---
	Տեսական դասերի անցկացում՝ կոնսպեկտի ձևով	5	2	3	---
	Սեկցիոն պարապմունքների կամ սպորտայնացված և առողջ ապրելակերպի դասերի անցկացում	5	2	3	---
	Առողջական խնդիրներ ունեցող երեխաների պարապմունքներին ծանոթացում և դիտում, աշակերտների բժշկական զննման քարտի ուսումնասիրում	4	2	2	---
	Ինքնուրույն պարապմունքների անկացման մեթոդիկայի ուսուցում	8	2	4	2
	Դպրոցականների ֆիզիկական պատրաստվածության և ֆիզիկական զարգացման որոշում և գնահատում՝ դպրոցի հնարավորության սահմաններում	12	2	8	2
	Ուսուցիչ-պրակտիկանտի նախապատրաստվելը դասին	10	2	6	2
3	ՂԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	26	8	12	6
	Կազմել աշակերտների հոգեբանական բնութագրերը	4	2	2	---
	Ուսումնասիրել կցված դասարանի դաստիարակչական աշխատանքների պլանը	2	---	2	---
	Բաց դասերի անցկացում (տեսական և գործնական, առողջ ապրելակերպի հետ կապված)	4	2	2	---
	Համաշխարհային առողջության օրվան նվիրված միջոցառման նախապատրաստում և տոնում (ապրիլի 7-ին)	4	---	2	2
	Տուրիստական արշավների կազմակերպում և անցկացում	6	2	2	2
	Քարոզչական աշխատանքների կազմակերպում և անցկացում	6	2	2	2
4	ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	12	4	8	---
5	ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ	6	2	4	---
6	ԸՆԴԱՄԵՆԸ	240	70	128	42

**ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԴՐԱԿՏԻԿԱՅԻ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԵՎ ԹԵՄԱՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

N	ԲԱԺԻՆՆԵՐԸ ԵՎ ԹԵՄԱՆԵՐԸ	ՇԱՐԱԹՆԵՐԸ							
		I	II	III	IV	V	VI	VII	VIII
1	ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	+	+	+	+	+	+	+	+
1.1	Մասնակցություն մանկավարժական պրակտիկայի ներգրավիչ և ամփոփիչ կոնֆերանսներին	+							+
1.2	Ծանոթանալ պրակտիկայի բաժնի, գործնական ամբիոնների և գրադարանի կողմից պատրաստված պրակտիկայի անկյունի բովանդակության հետ	+							
1.3	Մանրամասն ուսումնասիրել մանկավարժական պրակտիկայի ծրագիրը, փասթաթղթերը և պրակտիկանտի տետրը	+	+	+	+	+	+	+	+
1.4	Մասնակցել պրակտիկային վերաբերվող բոլոր միջոցառումներին	+	+	+	+	+	+	+	+
1.5	Հանդիպում դպրոցի տրնօրենի և մանկավարժական կոլեկտիվի հետ	+							
1.6	Հանդիպում ֆիզկուլտուրայի ուսուցչի հետ	+							
1.7	Հանդիպում ամրացված դասարանի դասղեկի հետ	+							
1.8	Հանդիպում դպրոցի բուժաշխատողի հետ	+							
2	ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	+	+	+	+	+	+	+	+
2.1	Փասթաթղթերի կազմում	+	+	+	+	+	+	+	+
2.2	Դասերի դիտում և անցկացում	+	+	+	+	+	+	+	+
2.3	Դասի մանկավարժական վերլուծություն					+	+	+	
2.4	Արտադասարանական պարապմունքների կազմակերպում և անցկացում			+	+	+	+	+	+
2.5	Մարզական զանգվածային (սպորտլանդիաների, մրցումների և այլ տոնակատարությունների) աշխատանքների կազմակերպում և անցկացում					+	+	+	+
2.6	Ֆիզկուլտուրային առողջարարական միջոցառումների կազմակերպում և անցկացում՝ <ul style="list-style-type: none"> • նախապարապմունքային մարմնամարզության ակցկացում (ամրացված դասարանում) • ֆիզկուլտ րոպեի անցկացում • շարժախաղեր և ֆիզիկական վարժություններ երկարացված դասամի- 		+	+	+	+	+	+	+

	ջոցներին • ամենօրյա ֆիզկուլտուրային պարապմունքներ երկարօրյա խմբերում • ամենամսյա առողջության և սպորտի օրեր								
2.7	Հանրակրթական առարկաների դասալսում		+	+	+	+			
2.8	Տեսական դասերի անցկացում՝ կոնսպեկտի ձևով			+	+	+	+	+	
2.9	Սեկցիոն պարապմունքների կամ սպորտայնացված դասերի անցկացում			+	+	+	+	+	
2.10	Առողջ ապրելակերպի դասի անցկացում			+	+	+	+	+	
2.11	Առողջական խնդիրներ ունեցող երեխաների պարապմունքներին ծանոթացում և դիտում, աշակերտների բժշկական քարտի զննման ուսումնասիրում			+	+	+	+		
2.12	Ինքնուրույն պարապմունքների անկացման մեթոդիկայի ուսուցում			+	+	+	+	+	
2.13	Դպրոցականների ֆիզիկական պատրաստվածության և ֆիզիկական զարգացման որոշում և զնահատում՝ դպրոցի հնարավորության դեպքում			+	+	+	+	+	
2.14	Ուսուցիչ-պրակտիկանտի նախապատրաստվելը դասին		+	+	+	+	+	+	+
3	ՂԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	+	+	+	+	+	+	+	+
3.1	Կազմել աշակերտների հոգեբանական բնութագրերը				+	+	+	+	
3.2	Ուսումնասիրել կցված դասարանի դաստիարակչական աշխատանքները			+	+	+	+	+	
3.3	Բաց դասերի անցկացում (տեսական և գործնական, առողջ ապրելակերպի հետ կապված)						+	+	+
3.4	Համաշխարհային առողջության օրվան նվիրված միջոցառման նախապատրաստում և տոնում(ապրիլի 7ին)					+	+	+	
3.5	Տուրիստական արշավների կազմակերպում և անցկացում					+	+	+	
3.6	Քարոզչական աշխատանքների կազմակերպում և անցկացում			+	+	+	+	+	
4	ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	+	+	+	+	+	+	+	+
5	ՀԱՇՎԵՏԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ								+

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

1. ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1.1. Մասնակցություն մանկավարժական պրակտիկայի ներգրավիչ և ամփոփիչ կոնֆերանսներին

Մասնակցել «Մանկավարժական պրակտիկայի նպատակը, խնդիրները, բովանդակությունը և կազմակերպումը» թեմայով ներգրավիչ կոնֆերանսին (մանկավարժական պրակտիկա մեկնող բոլոր ուսանողների և մեթոդիստների, այդ թվում հրավիրված ֆիզկուլտուրայի ուսուցիչների մասնակցությամբ):

1.2. Ծանոթանալ պրակտիկայի բաժնի, գործնական ամբիոնների և գրադարանի կողմից պատրաստված պրակտիկայի անկյունի բովանդակության հետ

1.3. Մանրամասն ուսումնասիրել մանկավարժական պրակտիկայի ծրագիրը, մանկավարժական պրակտիկայի ժամանակ պահանջվող բոլոր փաստաթղթերը և պրակտիկանտի տետրը

1.4. Մասնակցել մանկավարժական պրակտիկային վերաբերվող բոլոր միջոցառումներին

1.5. Հանդիպում դպրոցի տնօրենի և մանկավարժական կոլեկտիվի հետ

Պատմական և ընդհանուր ակնարկ դպրոցի մասին: Դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացման ձևերն ու բովանդակությունը: Դպրոցի նյութատեխնիկական հագեցվածությունը, հնարավորությունները, կապերը մարզաառողջարարական համալիրների և մարզադպրոցների հետ: Միջոցառումների կազմակերպման կարգը, հովանավորների առկայությունը: Դպրոցում դասերից դուրս իրականացվող մարզական միջոցառումների, աշակերտների հետ առողջ ապրելակերպի մարզական կյանքի իրադարձությունների քարոզչական աշխատանքների իրականացման կարգը: Մանկավարժական խորհրդի գործունեության կարգը: Դպրոցի խնդիրները ընթացիկ ուսումնական տարում: Տնօրենի, ուսմասվարի, դասղեկի, ֆիզկուլտուրայի ուսուցչի պարտականությունները: Դպրոցի ավանդույթները, աշակերտների նախասիրությունները, իրավունքները, պարտականությունները, դպրոցի ներքին կանոնակարգը: Ֆիզիկական դաստիարա-

կության տեղը դպրոցի աշխատանքային պլանում և մանկավարժական կոլեկտիվի դերը աշակերտների ֆիզիկական դաստիարակության հետագա բարելավման գործում: Առավոտյան նախապարապմունքային մարմնամարզության իրականացումը: Դպրոց-ծնող և ծնողական կոմիտեի աշխատանքների ձևերը: Աշակերտների առողջական վիճակը, արտադասարանական աշխատանքները:

1.6. Հանդիպում դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցչի (ների) հետ

Ֆիզիկական կուլտուրայի ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման և անցկացման առանձնահատկությունները, ֆիզկուլտուրային առողջարարական միջոցառումները դպրոցի օրվա ռեժիմում: Աշակերտների ֆիզիկական պատրասվածությունը, ուսման առաջադիմությունը «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից: Անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը «Ֆիզկուլտուրա» առարկայից: Տարբեր տարիքային և բժշկական խմբերում սովորողների ֆիզիկական դաստիարակության իրականացման առանձնահատկությունները: Աշակերտների նախասիրությունները, հաճախումները, կարգ ու կանոնի պահպանումը «Ֆիզկուլտուրա» առարկայի դասերին: Հանդերձարանների հագեցվածությունը, հիգենիկ միջոցառումների իրականացումը դասից հետո, առաջին բուժօգնության իրականացումը, վնասվածքների կանխարգելումը, անհրաժեշտ գույքի առկայությունը: Ուսանողներին ծանոթացնել մատյանի վարման կարգին: Ֆիզկուլտուրայի ուսուցչի կապը մարզաառողջարարական համալիրների և մարզադպրոցների մարզիչների հետ, բարձրակարգ և ճանաչված մարզիկների պարբերաբար այցելությունները՝ քարոզչական աշխատանքների իրականացման նպատակով: Դպրոցում սովորող մարզիկների մասին տեղեկություններ, նրանց խրախուսման կարգը: Ֆիզիկական դաստիարակության վերաբերյալ նոր գրականության մասին տեղեկություններ: Տեղեկություններ օլիմպիական շարժման գաղափարախոսության մասին:

1.7. Հանդիպում ամրացված դասարանի դասղեկի հետ

Ընդհանուր տեղեկություն դասարանի մասին: Ծանոթացում աշակերտների առաջադիմությանը, հետաքրքրություններին և նախասիրություններին, ծնողական ժողովների իրականացման կարգին և ժամկետներին, դաստիարակչական աշխատանքների ձևերի և մեթոդների իրականացմանը, դասղեկ-ծնող կապին: Միջառարկայական կապերի իրականացման վիճակը:

1.8. Հանդիպում դպրոցի բուժաշխատողի հետ

Ընդհանուր տեղեկություններ աշակերտների բժշկական քարտի և առողջական վիճակի մասին: Տեղեկություններ դպրոցում սովորող և ըստ առողջական վիճակի նախապատրաստական, հիմնական և հատուկ խմբերում ընդգրկված աշակերտների մասին, նրանց հիվանդության, առողջական վիճակի, ֆիզիկական պատրաստվածության մակարդակի և համապատասխան աշխատանքների իրականացման վերաբերյալ: Համապատասխան աշխատանքների իրականացում տարբեր վարակների և այլ հիվանդությունների ժամանակ: «Ֆիզկուլտուրա» առարկայի դասի ժամանակ ստացած վնասվածքների համապատասխան խնամքի և օգնության ցուցաբերման, օպերատիվ կապը համապատասխան բուժհաստատության հետ: Ինչպիսի քարոզչական աշխատանքներ են իրականացվում առողջ ապրելակերպի վերաբերյալ:

2.ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏՆՔՆԵՐ

2.1. Փաստաթղթերի կազմում

Ուսանողների կցումը համապատասխան դասարանների: Պրակտիկայի ամբողջ ժամանակահատվածի համար կազմել պրակտիկականտի անհատական աշխատանքային պլանը: Գործող ֆիզիկական կուլտուրայի չափորոշիչ ծրագրին համապատասխան, յուրաքանչյուր դասարանի համար կազմել ուսումնադաստիարակչական աշխատանքները իրականացնող փաստաթղթերը՝ ժամացանց, տարեկան պլան գրաֆիկ, թեմատիկ պլան, տեսական, գործնական և սպորտայնացված դասի կոնսպեկտներ՝ ծրագրի ժամանակահատվածին համապատասխան: Կազմել պրակտիկականտի արտադասարանական պարամունքների անհատական դասացուցակը և կանխատեսվող մարզական միջոցառումների մոտավոր ժամանակացույցը: Ընտրել յուրաքանչյուր դասարանի համար համապատասխան միջոցներ և մեթոդներ: Նույնը իրականացնել նաև բժշկական հատուկ խմբերում ընդգրկված աշակերտների հետ իրականացվող աշխատանքներում: Անհրաժեշտ է կազմել կրտսեր դպրոցի և միջին դպրոցի համար մեկական համապատասխան փաստաթղթեր (ժամացանց, տարեկան պլան գրաֆիկ, թեմատիկ պլան և յուրաքանչյուր դպրոցի համար վեցական գործնական, մեկական տեսական և մեկ սպորտայնացված դասի և սեկցիոն պարապմունքի (միջին դպրոցում) կոնսպեկտներ, իսկ եթե պրակտիկական անցկացվում է ավագ դպրոցում՝ համապատասխան փաստաթղթեր (ժա-

մացանց, տարեկան պլան գրաֆիկ, թեմատիկ պլան գրաֆիկ՝ ութ գործնական, երկու սպորտայնացված և տեսական դասի կոնսպեկտներ և երկու սեկցիոն պարպմունքի կոնսպեկտներ):

2.2. Դասերի դիտում և անցկացում

Մանկավարժական պրակտիկայի սկզբնական շրջանում ուսանողները իրենց մեթոդիստի հետ միասին պետք է դիտեն ֆիզկուլտուրայի ուսուցչի կողմից անցկացվող դասերը, այնուհետև քննարկեն: Ուշադրություն պետք է դարձվի թե ինչ մանկավարժական մեթոդներ և միջոցներ է ընտրվում դասը անցկացնելիս: Դիտելու համար մշակել դիտման քարտ, որը հնարավորություն կտա արձանագրել դիտման բաղադրիչները, որից հետո քննարկել դասը:

Դիտման քարտում գրանցվում է մարզագույքի օգտագործումը, մեթոդների ընտրությունը, աշակերտների կողմից նյութի յուրացման աստիճանը, դիտակտիկ նյութերը:

2.3. Դասի մանկավարժական վերլուծություն

Դասի վերլուծությունը կարող է լինել ընդհանուր (երբ վերլուծվում է դասը ամբողջությամբ) և մասնակի (երբ վերլուծվում դասի որևէ մասը կամ մասի որևէ հատվածը): Ընդհանուր տեղեկություններ՝ պրակտիկանտի անունը, ազգանունը, դասի անցկացման ամսաթիվը, դասարանը, աշակերտների քանակը և դասին մասնակցող աշակերտների քանակը, դասի խնդիրները: Դասին նախապատրաստվելը, անհարժեշտ փասթաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանումը դասի խնդիրներին, բովանդակությանը, անհարժեշտ գույքի առկայությանը, ճիշտ տեղի ընտրումը և մակերեսի օգտագործումը: Դաս վարողի առաջադրած խնդիրների իրականացումը: Դասի ընթացքում առողջարարական, կրթական և դաստիարակչական խնդիրների իրականացումը: Տերմինաբանության տիրապետումը, օգնության ապահովումը, դասի անվտանգության ապահովումը, դասի խնդիրների իրականացումը, ուսուցչի մանկավարժական վարպետությունը, ուսուցման մեթոդների ընտրությունը, դասի եզրափակումը, տնային հանձնարարությունները, առաջակությունները և եզրակացությունները (դասի ինչն էր նորը, ինչ թերություններ կային և առաջարկություններ թերությունները վերացնելու համար): Դասի բեռնվածությունը, ընդհանուր և շարժիչ խտությունը:

2.4. Արտադասարանական պարապմունքների կազմակերպում և անցկացում

Դպրոցում ֆիզիկական կուլտուրայով և սպորտով պարապմունքների արտադասարանական ձևերն են՝ մարմնամարզությունը, աթլետիկան, մարզախաղերը, ուժային պատրաստությունը, լողը, դահուկային պատրաստությունը, տուրիզմը, տուրիստական արշավները, սպորտային բաժանմունքները, թիմերը, ընդհանուր ֆիզիկական պատրաստության խմբակները, էքսկուրսիաները, առողջության օրերը, ֆիզկուլտուրային տոները, մարզական միջոցառումները, ֆիզկուլտուրայի և սպորտի օրերը: Արտադասարանական բոլոր աշխատանքները անց են կացվում դասերից հետո պարապմունքների ձևով, որոնց բովանդակությունը պետք է հանդիսանա ֆիզիկական կուլտուրայի չափորոշիչ ծրագրի նյութը: Նպատակն է՝ կատարելագործել աշակերտների կարողությունները և հմտությունները տարբեր ֆիզիկական վարժությունների կատարման ժամանակ: Խնդիրներն են՝ աջակցել դպրոցում ուսումնադաստիարակչական խնդիրների լուծմանը, նպաստել աշակերտների առողջության ամրապնդմանը, օրգանիզմի կոփմանը, բազմակողմանի և ներդաշնակ զարգացմանը, խորացնել և ընդլայնել ֆիզիկական կուլտուրայի դասերի ժամանակ ստացած գիտելիքները, կարողությունները, հմտությունները, զարգացնել գեղագիտական ճաշակ, տեսնել և ընկալել սպորտի գեղեցկությունը, նրբագեղությունը, հմայչությունը, աշակերտների մոտ սերմանել և զարգացնել կազմակերպչական հմտություններ, կազմակերպել աշակերտների ակտիվ հանգիստը, աշակերտների մոտ առաջացնել սեր ֆիզկուլտուրայով և սպորտով զբաղվելու համար: Այն իրականացվում է հետևյալ ուղղություններով և միջոցներով՝ դպրոցի ֆիզկուլտուրային մարզական ավանդույթներով և աշակերտների նախասիրություններով, դպրոցի արտադասարանական պարապմունքների անցկացման առանձնահատկություններով, պրակտիկանտների կողմից կազմակերպվող և անցկացվող արտադասարանական և մարզական զանգվածային միջոցառումներով և մրցումներով: Իրականացնել մարզական սեկցիաների և ընդհանուր ֆիզիկական պատրաստության խմբերի ուսումնամարզական պարապմունքների և դպրոցի ֆիզիկական կուլտուրայի կոլեկտիվ աշխատանքի պլաններով նախատեսված միջոցառումները, կատարել պարտականությունների բաշխում, այդ աշխատանքները կազմակերպելու համար: Դպրոցում սեկցիոն, իսկ տանը ինքնուրույն պարապմունքների անցկացման առանձնահատկությունները:

2.5 Մարզական զանգվածային աշխատանքների կազմակերպում և անցկացում (սպորտլանդիաներ, մրցումներ, և այլ մարզական տոնակատարություններ)

Մարզական զանգվածային աշխատանքները (մրցումները ինչպես նաև սպորտլանդիաները) ընդգրկած են դպրոցի ընդհանուր ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանում: Դպրոցական մրցումներում տարբերում ենք մրցման հետևյալ տեսակները՝ ներդպրոցական, միջդպրոցական, շրջանային, քաղաքային, մարզային, հանրապետական, տարածաշրջանային և գերատեսչական: Ներդպրոցական մրցումները կարող են ստորաբաժանվել ներսեկցիոն, ներդասարանային, զուգահեռ և տարբեր դասարանների միջև: Մրցումները կարող են անցկացվել անհատական, թիմային, անհատական-թիմային և դասակարգման: Ներսեկցիոն և ներդասարանական մրցումների ժամանակ պրակտիկանտը ուսուցչի հետ միասին կարող է անցկացնել ընկերական հանդիպումներ և ընտրական մրցումներ: Մրցումների կազմակերպման և անցկացման մանկավարժական պահանջներն են՝ պլանավորվածությունը (ձևը, տեղը, ժամանակահատվածը), կանոնադրությունը (խիստ կարգավորված և պարտադիր բոլոր մասնակիցների համար), հատուկ կահավորված դահլիճի և մրցումների անցկացման վայրը, մրցավարների և մասնակիցների անվտանգությունը մրցումների ընթացքում, ստանդարտներին համապատասխան մարզագույքը, մասնակիցների հստակ խմբավորում ըստ սեռի, տարիքի և մարզական արդյունքների, մասնակիցների բժշկի կողմից մրցմանը մասնակցելու թույլատվությունը և նրա ներկայությունը մրցումներին, մրցումների արդյունքների վավերացում վերադաս մարմինների կողմից:

2.6 Ֆիզկուլտուրային առողջարարական միջոցառումների կազմակերպում և անցկացում

Ֆիզկուլտուրային առողջարարական միջոցառումներին են վերաբերվում՝ նախապարապմունքային մարմնամարզությունը (մինչև ուսումնական պարապմունքը), դասերի ժամանակ ֆիզկուլտ րոպեները, շարժախաղերը և ֆիզիկական վարժությունները (երկարացված դասամիջոցներին), ամենօրյա ֆիզկուլտուրային պարապմունքները (երկարօրյա խմբերում), ամենամսյա առողջության և սպորտի օրերը:

2.6.1.Նախապարապմունքային մարմնամարզության անցկացում ամրացված դասարանում

Նախապարապնունքային մարմնամարզությամբ սկսվում է աշխատանքային օրը, որը նպաստում է լուծելու առողջարարական մի շարք խնդիրներ՝ կեցվածքի ձևավորման, մկանային համակարգի ամրապնդման, նյութափոխանակության ակտիվացման, ինքնազգացողության և տրամադրության բարձրացման, դիմադրողականության բարելավման և առաջիկա դասերի ժամանակ աշխատունակության պահպանման, դաստիարակում է կարգապահություն, կազմակերպվածություն, պատասխանատվության զգացում և այլն: Մարմնամարզության արդյունավետությունը կախված է նրա կազմակերպման մեթոդիկայից: Գլխավոր դերում այստեղ հանդես է գալիս ֆիզկուլտուրայի ուսուցիչը (պրակտիկանտը): Ցանկալի է, որ մարմնամարզությունը անցկացվի բացօթյա: Տևողությունը չպետք է գերազանցի 5-6 րոպե:

2.6.2.Ֆիզկուլտ րոպեի անցկացում

Դպրոցում ֆիզկուլտ րոպեի անցկացումը հանդիսանում է սովորողների ուսումնական օրվա առողջարար ձևերից մեկը: Այն նպաստում է մտավոր աշխատունակության վերականգնմանը, հոգնածության նվազեցմանը: Ֆիզկուլտ րոպեն անցկացվում է այն ժամանակ, երբ աշակերտների մոտ նկատվում է անտարբերություն, անուշադրություն, նրանք դառնում են անհանգիստ: Վարժությունները կատարվում են նստած կամ կանգնած: Այդ իսկ պատճառով վարժությունները չպետք է լինեն մեծ լայնությով: Վարժությունները ընտրվում են կախված դասի ուսումնական աշխատանքի բնույթից:

Պրակտիկանտը պետք է օգնի և հետազայում ինքնուրույն անցկացնի ֆիզկուլտ րոպե: Հանրակրթական առարկաների դասալսման ժամանակ պրակտիկանտը պետք է անցկացնի ֆիզկուլտ րոպե, որի տևողությունը կարող է լինել 1-2 րոպե:

2.6.3.Շարժախաղեր և ֆիզիկական վարժություններ՝ երկարացված դասամիջոցներին

Այս շարժախաղերը և վարժությունները բարձրացնում են սովորողի օրգանիզմի ընդհանուր տոնուսը, վերականգնում աշխատունակությունը, նպաստում են կենտրոնացմանը՝ առաջիկա դասերին, անցնող նյութի ընկալմանը, ուժեղացնում են ուշադրությունը: Դասամիջոցին շարժախաղերի կազմակերպման և անցկացման ղեկավարումը իրականացվում է դպրոցի տնօրինության հետ: Բայց անմիջական անցկացումը իրականացվում է ուսուցիչների, դասղեկների կողմից: Առանձնահատուկ

դեր ունի ֆիզկուլտուրայի ուսուցիչը: Ընտրելով շարժախաղերի անցկացման տարբերակներ, նա միաժամանակ մտածում է, թե ինչպե՞ս ստեղծել դրական հույզեր, օգտագործելով դպրոցի սովորողների ակտիվը: Անցկացման վայրը՝ դպրոցի հրապարակ կամ մոտակա զբոսայգի: Աշակերտները կարող են մասնակցել իրենց առօրյա հագուստով:

2.6.4. Ամենօրյա ֆիզկուլտուրային պարապմունքներ՝ երկարօրյա խմբերում

Երկարօրյա դպրոցների և խմբերի ռեժիմում ֆիզիկական կուլտուրայից ամենօրյա մեկժամյա պարապմունքի՝ «Մարզաժամ» կազմակերպելու խնդիրն է, աշակերտների մտավոր լարվածության բեռնաթափումը, հոգնածության դեմ հականերգործումը, արդյունավետ հանգստի ապահովումը, առողջության ամրապնդումը, նրանց ֆիզիկական զարգացման և շարժողական ընդունակությունների կտարելագործումը և այլն: Այստեղ պարապմունքները անցկացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել աշակերտների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները: Մարզաժամի անցկացման համար դաստիարակներին մեթոդական օգնություն են ցույց տալիս ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչները (պրակտիկանտները):

2.6.5. Ամենամսյա առողջության և սպորտի օրեր

Առողջության և սպորտի օրերի միջոցառման ծրագրերի մեջ կարելի է ընդգրկել մարզական խաղեր, տուրիստական արշավներ, զանգվածային մրցումներ, միջազգային առողջության օրվան նվիրված միջոցառումներ, ցերեկույթներ, սպորտ-լանդիաներ և այլն: Անցկացման ժամկետները սահմանվում է դպրոցի տնօրենի կողմից՝ կախված բնակլիմայական պայմաններից, նյութատեխնիկական բազայից, դպրոցում ստեղծված ավանդույթներից, աշակերտների նախասիրություններից: Այն կարելի է կազմակերպել հանրակրթական դպրոցի բոլոր դասարաններում հաշվի առնելով աշակերտների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները:

2.7. Հանրակրթական առարկաների դասալսում

Նպատակը կայանում է նրանում, որ պրակտիկանտը ճանաչի իրեն կցված դասարանի աշակերտներին, ծանոթանա նրանց նախասիրություններին, երեխաների վարքին, ինչպես նաև նրանց կարողություններին և գիտելիքներին: Գիտենա նաև, թե ինչ մեթոդներ և միջոցներ են կիրառվում հանրակրթական մյուս առարկաներ դասավանդող ուսուցիչները: Անհրաժեշտ է, որպեսզի պրակտիկանտը ներկա գտնվի

դասղեկի կողմից անցկացվող դասին և ուշադրություն դարձնի դաստիարակաչական աշխատանքների իրականացման վրա:

2.8. Տեսական դասերի անցկացում` կոնսպեկտի ձևով

2.9. Սեկցիոն պարապմունքների կամ սպորտայնացված դասերի անցկացում

2.10. Առողջ ապրելակերպի դասի անցկացում

2.11.Առողջական խնդիրներ ունեցող երեխաների պարապմունքներին ծանոթացում և դիտում, աշակերտների բժշկական զննման քարտի ուսումնասիրում

Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի պարտադիր դասավանդման շրջանակներում բժշկական զննման արդյունքներով աշակերտների հիմնական, նախապատրաստական և հատուկ խմբերի բաժանման չափորոշիչը, այդ խմբերի բժշկական բնութագիրը և դրանցից յուրաքանչյուրի համար ֆիզիկական բեռնվածության թույլատրելի ծավալները, ըստ հիվանդությունների տեսակների և ախտաբանական վիճակների առողջական խնդիրներ ունեցող աշակերտների «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման խմբերը որոշելու չափորոշիչը հաստատվում է համաձայն ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետությունում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 2353 որոշմամբ հաստատված հավելված 4-րդ կետի պահանջների:

Ի կատարումը ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշման ՀՀ առողջապահության նախարարը արձակել է 2006 թվականի սեպտեմբերի 22-ին թիվ 1075 հրամանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ «ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ» ԱՌԱՐԿԱՅԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ, ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԽՄԲԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ

1.Հանրակրթական հաստատություններում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման հիմնական, նախապատրաստական և հատուկ խմբերը բաժանվում են

ելնելով՝ երեխաների անամենտիկ տվյալներից, ֆիզիկական զարգացումից ու պատրաստվածությունից, առողջական վիճակից, օրգանիզմի մարզվածության աստիճանից:

2.«Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման խմբերի բաժանումը կատարվում է ուսումնական տարվա սկզբում տարածքային սպասարկման բժշկական հաստատության կողմից (տեղամասային պոլիկլինիկա, գյուղական բժշկական ամբուլատորիա, գյուղական առողջության կենտրոն)՝ համաձայն տվյալ տարվա ընթացքում աշակերտների բժշկական զննման արդյունքների: Բժշկական զննման արդյունքում տրվում է եզրակացություն, առողջական վիճակի և ֆիզիկական զարգացման մասին:

3.Աշակերտների բժշկական զննումը կազմակերպվում է տարվա ընթացքում տեղամասային բժիշկների կողմից՝ առողջ երեխայի հսկողության ծավալով, երեխայի ծննդյան ամսաթվին համապատասխան: Ըստ անհրաժեշտության զննմանը պետք է ներգրավվեն համապատասխան նեղ մասնագետներ (վիրաբույժ, օրթոպեդ, ակնաբույժ, նյարդաբան, ռևմատոլոգ և այլն) ինչպես նաև իրականացվեն լաբորատոր-գործիքային հետազոտություններ:

4.«Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման խմբերը տարվա ընթացքում կարող են փոփոխվել՝ ելնելով երեխայի առողջական վիճակից: Բժշկական հսկողության ընթացքում անհրաժեշտ է նաև հիվանդությունների և վնասվածքների վերականգման շրջանում ֆիզիկական բեռնվածության ճիշտ որոշումը, չափավորումը, ինչպես նաև դրա աստիճանական մեծացումը, ծանրաբեռնումը:

5.Յուրաքանչյուր աշակերտի առողջական վիճակի և ֆիզիկական զարգացման մասին տրված եզրակացությունը, «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման խմբի վերաբերյալ տեղեկությունները գրանցվում են աշակերտի բժշկական քարտում: Տարվա ընթացքում աշակերտի տեղափոխումը մեկ խմբից մյուսը կատարվում է տեղամասային բժշկի գրավոր եզրակացության հիման վրա:

6.Նախապատրաստական խմբի պարապմունքները անց են կացվում հիմնական խմբի հետ, նույն ուսումնական ծրագրով:

7.Երկու խմբերն էլ հանձնում են ստուգողական նորմատիվներ, միան այն տարբերությամբ, որ նախապատրաստական խմբի համար այն պահանջվում է որոշ սահմանափակումով, երեխայի ֆունկցիոնալ հնարավորությունների սահմանում, աստիճանաբար մեծացնելով պահանջվող նորմայի սահմանները:

8.Նախապատրաստական խմբում, երեխաների ֆիզիկական ընդհանուր պատրաստվածությունը բարձրացնելու նպատակով, իրականացվում են լրացուցիչ պարապմունքներ: Նախապատրաստական խմբի երեխաներին չի թույլատրվում մասնակցել սպորտային մրցումներին:

**ՀԻՄՆԱԿԱՆ, ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԽՄԲԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԴՐԱՆՑԻՑ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻ ՀԱՄԱՐ ՖԻԶԻԿԱԿԱՆ
ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ**

Խումբ	Խմբի բժշկական բնութագիրը	Թույլատրելի բեռնվածության ծավալները
1	2	3
Հիմնական	Հիմնական խմբին դասվում են առողջության կողմից շեղում չունեցող, ինչպես նաև առողջության կողմից աննշան մորֆոֆունկցիոնալ շեղում ունեցող, բայց բավարար զարգացում և պատրաստվածություն ունեցող աշակերտները:	1.Պարապմունքներ «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման ծրագրի ծավալով: 2.Ստուգիչ նորմատիվների հանձնում: 3.Պարապմունքներ դպրոցի սպորտային ցանկացած սեկցիայում: Թույլատրվում է մասնակցել սպորտային մրցումներին:
Նախապատրաստական	Նախապատրաստական խմբին դասվում են առողջության և ֆիզիկական զարգացման կողմից աննշան շեղումներ և ոչ բավարար ֆիզիկական պատրաստվածություն ունեցող աշակերտները:	1.Պարապմունքներ «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման ծրագրի ծավալով: 2.Ստուգիչ նորմատիվների հանձնում` ֆիզիկական բեռնվածությունը ֆունկցիոնալ հնարավորությունների սահմանում` այն բարձրացնելով աստիճանաբար և չափավորված: 3. Չի թույլատրվում մասնակցել մրցումներին:
Հատուկ	Հատուկ խմբին դասվում են այն աշակերտները, որոնք ունեն առողջության մշտական կամ ժամանակավոր բնույթի այնպիսի նշանակալից շեղումներ, որոնք ուսումնական գործընթացի համար հակացուցումներ չեն, սակայն պահանջում են ֆիզիկական բեռնվածության սահմանափակում, հարկ եղած դեպքում բուժական հատուկ վարժություններ:	1.Պարապմունքներ հատուկ ուսումնական ծրագրով` հաշվի առնելով հիվանդության բնույթը և ծանրության աստիճանը: 2.Անհրաժեշտության դեպքում պարապմունքներ բուժական ֆիզկուլտուրայով համապատասխան բժշկական կազմակերպությունում:

2.11. Ինքնուրույն պարապմունքների անցկացման մեթոդիկայի ուսուցում

2.12.Դպրոցականների ֆիզիկական պատրաստվածության և ֆիզիկական զարգացման որոշում և գնահատում` դպրոցի հնարավորության սահմաններում

2.13.Ուսուցիչ-պրակտիկանտի նախապատրաստվելը դասին

Դասի արդյունավետությունը պայմանավորվում է նրանով, թե ինչպես է այն նախապատրաստվել (դասի պլանավորում, դասի կոնսպեկտի նախապատրաստում, պրակտիկանտի անձնական նախապատրաստում, դասի տեղի և մարզագույքի նախապատրաստում, դասարանի ակտիվի նախապատրաստում): Դասի պլանավորումը կատարվում է հիմք ընդունելով թեմատիկ պլանը, որտեղ նախօրոք նշվում են դասի բովանդակության հետ կապված խնդիրները: Դասից առաջ այդ խնդիրները ճշտվում են կապելով նախորդ դասի բովանդակության հետ: Խնդիրները ճշտելուց հետո ուսուցիչը (պրակտիկանտը) կազմում է դասի կոնսպեկտը: Դասը անց-

կացնելուց հետո յուրաքանչյուր հաջորդ դասի համար պետք է կատարվեն նշումներ, թերի կատարածի վերաբերյալ: Պրակտիկանտի դասին անմիջական նախապատրաստվելը պետք է նպատակաուղղված լինի մեթոդական գրականություն ընթերցելու, նախատեսված վարժություններ փորձարկելու և հրահանգների հետ: Ուսուցիչը (պրակտիկանտը) դասը պետք է վարի համապատասխան մարզական հագուստով: Եթե դասի ընթացքը կապված է գործիքների տեղադրման, օժանդակ գույքի օգտագործման հետ, ապա ուսուցիչը (պրակտիկանտը) պարտավոր է գույքը նախօրոք բերել դահլիճ, տեղադրել համապատասխան տեղում: Եթե նախատեսվում է դասարանը բաժանել երթախմբերի կամ խմբերի, ապա մինչև դասը սկսելը պրակտիկանտը պատրաստված երեխաներից պետք է ընտրի խմբավարներ և նախապատրաստի նրանց, որպեսզի օգնեն իրեն:

3. ՂԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

3.1. Կազմել աշակերտների հոգեբանական բնութագրերը.

Պրակտիկանտը պետք է ծանոթանա դպրոցի արտադասարանական դաստիարակչական աշխատանքների բովանդակությանն ու կազմակերպմանը (համադպրոցական դաստիարակչական աշխատանքների պլան, ամրացված դասարանի դաստիարակչական աշխատանքի պլան և այլն): Պետք է ծանոթ լինի դաստիարակչական աշխատանքի գծով դպրոցի տնօրենի տեղակալի հաղորդմանը տվյալ դպրոցում արտադասարանական աշխատանքների առանձնահատկությունների մասին: Ակտիվ մասնակցություն ունենա կցված դասարանի դասղեկի ուսումնադաստիարակչական աշխատանքներին (ընդհանուր առաջադիմությունը, կոլեկտիվի ձևավորումը, հասարակական աշխատանքների իրականացումը, կապը ծնողների հետ և այլն), դասարանական ժողովներին: Գնահատել ամրացված դասարանի աշակերտների կարգապահությունը, առաջադիմությունը, հասարակական ակտիվությունը: Ստացված տվյալների հիման վրա կազմել ամրացված դասարանի աշակերտների մանկավարժական բնութագիրը: Կազմել սպորտով զբաղվող 2-3 աշակերտի մանկավարժական անհատական բնութագիրը (ուսումնասիրել նրանց առաջադիմությունը, հասարակական ակտիվությունը, հետաքրքրությունները և այլն) և պրակտիկայի ողջ ընթացքում հետևել նրանց: Ֆիզիկական կուլտուրայի դասերին ապահովել ուսուցման դաստիարակչական բնույթը, ֆիզկուլտուրային-առողջարարական և մարզական զանգվածային աշխատանքային դաստիարակության հետ: Ստանա ընդհանուր տեղեկություններ դասարանի մասին (աշակերտների թիվը,

տղա և աղջիկ), գերազանցիկների քանակը, թույլ աշակերտների քանակը: Տեղեկություններ ձեռք բերի դասարանի ակտիվի մասին, նրա հեղինակությունը, նախաձեռնությունը: Դասարանի կարգապահությունը դասի ընթացքում և դասից դուրս, հանձնարարությունների կատարման կուլտուրան: Դժվար դաստիարակվող աշակերտների քանակը, մոտեցման ձևերը և համապատասխան աշխատանքները: Դասարանի համախմբվածությունը, վերաբերմունքը մեկը մյուսի, ուսուցիչների, ընկերների, մեծահասակների հանդեպ: Վերաբերմունքը ֆիզիկական կուլտուրայի և մարզական, արտադասարանական պարապմունքների և մարզական միջոցառումների հանդեպ: Աշակերտների նախասիրությունները և հետաքրքրությունները: Պատրաստ լինել իրականացնելու ֆիզիկական կուլտուրայի ծրագրով նախատեսված դաստիարակչական խնդիրների իրականացմանը՝ ընկերասիրություն, փոխօգնություն, համագործակցություն և այլն: Իրականացնի ռազմահայրենասիրական դաստիարակչական աշխատանքներ:

3.2. Ուսումնասիրել ամրացված դասարանի դաստիարակչական աշխատանքները

3.3. Մասնակցություն ծնողական ժողովներին

3.4. Բաց դասերի անցկացում (տեսական և գործնական, առողջ ապրելակերպի հետ կապված)

3.5. Համաշխարհային առողջության օրվան նվիրված միջոցառման նախապատրաստում և տոնում (ապրիլի 7-ին)

3.6. Տուրիստական արշավների կազմակերպում և անցկացում

Հետիոտն և տուրիստական արշավները ունեն կրթական և դաստիարակչական մեծ նշանակություն, երեխաները ծանոթանում են բնության հետ: Այս միջոցառումները նպաստում են կատարելագործելու ունեցած հմտությունները, կոփում օրգանիզմը և ամրապնդում առողջությունը, նպաստում են յուրացնելու ինքնասպասարկման, վարքի և տեղանքում կողմնորոշվելու կարողություններ: Անգնահատելի դեր են կատարում մանկական կոլեկտիվի ստեղծման և ամրապնդման, բարեկամական և ընկերական զգացումի դաստիարակման գործում: Հիմնականում բոլոր տեսակի արշավները կատարվում են հետիոտն, ձմռանը կարող են օգտագործվել դահուկներ: Այդ արշավները անց են կացվում ամեն մի դասարանի համար առանձին: Երթևեկելու տարածությունը չպետք է գերազանցի՝ I-II դ. 5-7կմ, III դ. 8-10կմ (2 ուղղությունները միասին), ընթացքում անհրաժեշտ է հանգիստ 1-2 ժամ: Ոչ մեծ էքսկուրսիաները կարող են

կազմակերպվել ցանկացած ուսումնական օր, իսկ մեծ տարածությամբ արշավները միայն հանգստյան օրերին կամ արձակուրդների ժամանակ: Ամեն մի միջոցառում նախօրոք պետք է մանրամասն մշակված լինի աշխատանքնային պլանում: Այդ պլանը նախատեսում է միջոցառման խնդիրը, երթուղին, հանգստի վայրը, պարապմունքները և խաղերը ճանապարհի, գույքը, մասնակիցների անհատական և խմբային հանդերձանքը: Առաջիկա արշավի կամ էքսկուրսիայի մասին սովորողներին տեղեկացվում է նախօրոք: Այդ միջոցառման ղեկավարը պարտավոր է լավ իմանալ մասնակիցների քանակը, նրանց առողջական վիճակը, որպեսզի որոշի նրանց այդ միջոցառմանը մասնակցելու կամ չմասնակցելու հարցը: Նաև պետք է լավ գիտենա նրանց ֆիզիկական պատրաստության մակարդակը: Դրանից է կախված երթուղու որոշումը, խմբի շարժման ուղղությունը: Եթե խումբը ըստ կազմի տարբեր են, ղեկավարը որոշում է շարժման արագությունը՝ կողմնորոշվելով համեմատաբար թույլ աշակերտներով: Ցանկացած միջոցառման հաջող անցկացման կարևոր պայմաններից մեկն է հանդիսանում սովորողների կարգապահությունը: Ինչպես նաև հանձնարարությունների հստակ կատարումը: Ուստի ղեկավարը նախօրոք սովորողների հետ անց է կացնում բացատրական աշխատանք, իսկ միջոցառման ժամանակ պահանջում սահմանված կարգի պարտադիր կատարում:

Ցանկացած միջոցառման նախապատրաստման ժամանակ ղեկավարը նախօրոք սովորողներից առանձնացնում է օգնականներին, որոնք կկազմակերպեն երեխաներին, կընտրեն անհրաժեշտ գույքը, կստուգեն մասնակիցների պատրաստությունը, իրենք կպատրաստվեն և կօգնեն մյուսներին: Առավել ֆիզիկապես պատրաստված աշակերտներին բժիշկը թույլ է տալիս ամառային արձակուրդների ժամանակ անցկացնել երկարօրյա արշավներ: Արշավի պլանը մշակվում է ղեկավարի կողմից ապա հաստատվում տնօրենի կողմից: Ամեն մի մասնակից, արշավից 1-2 օր առաջ և անմիջապես արշավից առաջ ստուգվում է ղեկավարի կողմից: Արշավին պետք է ընդգրկել նաև դպրոցի բժշկին կամ բուժքրոջը: Այդպիսի արշավի համար ղեկավարը նախօրոք մասնակիցների հետ անց է կացնում մի քանի մարզական պարապմունքներ, ուսումնասիրում արշավի երթուղին և բաշխում պարտականությունները: Մեծ ուշադրություն է հատկացվում կոլեկտիվի հանդերձանքին, գիշերային քնի և սննդի կազմակերպման նախապատրաստական աշխատանքներին: Սնունդը պետք է տրվի ժամանակին, գիշերային քունը պետք է կազմակերպել փակ տարածքում: Երթուղու որոշման ժամանակ հաշվի է առնվում անցնելիք տարածքը, խմելու ջրի, գետերի առկայությունը:

Արշավի ժամանակ կոլեկտիվի հանդերձանքը կազմված է հետևյալ առարկաներից՝ կացին, սնունդ պատրաստելու համար ամանեղեն, շերեփ, թավա, դանակ, լուսանկարչական ապարատ, գնդակներ, ազդանշանային դրոշներ, ասեղ, թել, կոճակներ, լուցկի և դեղատուր: Մասնակիցների անհատական հանդերձանքի մեջ մտնում են, ամռանը՝ երկար թևերով շապիկ և վերնաշապիկ, ներքնաշոր, մարզական կամ սովորական շալվար, գլխարկ, ձուքակոշիկներ, գուլպաներ, տաք վերնազգեստներ: Յուրաքանչյուր մասնակից իր համար վերցնում է ուսապարկ, գդալ, բաժակ, սրբիչ, օձառ, անձեռոցիկ, տետր, գրիչ: Ուսապարկում դրվում է բոլոր անձնական իրերը և կոլեկտիվի հանդերձանքի որոշակի մասը, ընդ որում քաշը ուսապարկում չպետք է գերազանցի 3կգ-ը: Արշավի ժամանակ երեխաներին պետք է սովորեցնել կողմնորոշվել տեղանքում կողմնացույցի և արևի օգնությամբ: Տեղանքում կողմնորոշվել նշանակում է հորիզոնի կողմի որոշումը՝ հյուսիս, հարավ, արևելք և արևմուտք:

3.7. Քարոզչական աշխատանքների կազմակերպում և անցկացում

- Հանդիպում ծնողների հետ:
- Տարբեր միջոցառումների կազմակերպում (ցերեկույթներ, հանդիպումներ անվանի մարզիկների հետ և այլն):
- Հանդիպում կոլեկտիվի հետ (առողջ ապրելակերպի հետ կապված աշխատանքներ կոլեկտիվի շրջակներում):
- Կրտսեր դպրոցում անհրաժեշտ է երեխաներին կողմնորոշել որևէ մարզաձևով պարապելու համար:

4. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՐՏՆԵՐ, ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Կրտսեր դպրոց: Ֆիզիկական դաստիարակության ծրագրի խնդիրները և բովանդակության յուրահատկությունը բնորոշում է այդ տարիքի երեխաների ֆիզիկական կուլտուրայի դասի մեթոդիկայի առանձնահատկությունները:

- Կրտսեր դպրոցական տարիքի համար դասի առաջնային խնդիրներն են՝ բնական շարժողական գործողությունների կատարելագործումը (քայլք, վազք, ցատկեր, նետումներ, մագլցում):

- Որքան ցածր է դասարանը, այնքան շատ ուշադրություն է դարձվում ոտնաթաթերի մկանների ամրապնդման և ճիշտ կեցվածքի ձևավորման վրա:

- Մեկ դասի ընթացքում նպատակահարմար է լուծել ոչ ավելի քան 2-3 խնդիրներ, որոնք կապված են ուսումնական նյութի յուրացման և կատարելագործման հետ:

- Ամեն մի դասին պարտադիր անցկացվում են շարժախաղեր: Մինչև 10-11 տարեկան երեխաների մոտ խաղային նյութը պետք է զբաղեցնի դասի մոտավորապես ընդհանուր ժամանակի կեսը:

- Հիմնական շարժումների ուսուցման ժամանակ պետք է մեծ ուշադրություն դարձնել վարժությունների տեխնիկական ճիշտ կատարմանը, ինչպես նաև ուսուցումը զուգակցել շարժողական ընդունակությունների մշակման հետ, ուշադրություն դարձնել արագաշարժության, ճարպկության, ձկունության, ընդհանուր դիմացկունության, հավասարակշռության, կոորդինացիայի վրա:

- Առողջ ապրելակերպի բաղադրիչների կիրառման պահանջմունքի ձևավորում:

- Հարմարվելիության նպատակով ծանոթանալ մանկապարտեզի ավագ խմբի աշխատանքային ծրագրին, պահպանել հաջորդականությունը, վարքի դրսևորման առանձնահատկությունները, մեթոդների և միջոցների ընտրությունը: Այս ամենը շատ կարևոր է քանի որ վեց տարեկանների ուսուցումը և դասը երեխաների կազմակերպման և ձևավորման կարևոր խնդիրներից մեկն է: Մյուս կողմից ոչ բոլոր երեխաներն են մանկապարտեզից գալիս դպրոց: Դրա համար բավականին մեղմացված է առաջին դասարանի ծրագիրը:

Միջին (հիմնական) դպրոց: Այս տարիքի երեխաների մոտ տեղի է ունենում կենսաբանական փոփոխություններ, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել ֆիզիկական կուլտուրայի դասերին: Այդ երեխաների անհատական տարբերությունը ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչը հաշվի է առնում ֆիզիկական կուլտուրայի դասերին և առանձնացնում է շարժումների տեմպը, չափը և շարժողական ընդունակությունների մշակումը.

- Այս տարիքի երեխաների մոտ կարելի է մշակել ուժային ընդունակություններ, դիմացկունություն:

- Այս տարիքում ուսուցման հիմնական միջոցները հանդիսանում են ֆիզիկական վարժությունները, որոնց միջոցով պատանիների և դեռահասների մոտ ձևավորվում են կյանքին անհրաժեշտ կարողություններ և հմտություններ, մշակում շարժողական ընդունակություններ, օրգանիզմի հարմավորականության հատկությունների:

- Հիմնական դպրոցի ավարտական դասարաններում (8-9-րդ) սկսվում է տղաների նախազինակոչային տարիքը, որը անհրաժեշտ է հաշվի առնել՝ ապահովելու համար նրանց համապատասխան նախապատրաստումը:

- Ֆիզիկական կուլտուրայի դասերը հիմնական դպրոցում ավելի խորացված է անցկացվում, քանի որ մեր գլխավոր խնդիրը կապված ուսման հետ իրականացվում է հենց այս հատվածում:

- Միջին դպրոցում սկսվում է օրգանիզմի զարգացման կրիտիկական շրջանը կապված սեռական հասունացման հետ:

- Ֆիզիկական դաստիարակության մեթոդիկական հիմնվում է տարիքային զարգացման օրինաչափությունների վրա:

- Այս տարիքում անհրաժեշտ է ձևավորել առողջ ապրելակերպ վարելու կուլտուրա:

Ավագ դպրոց: Ավագ դպրոցական տարիքում ֆիզկուլտուրայի դասերը աղջիկների և պատանիների համար պետք է անցկացնել առանձին: Հաշվի առնելով պատանիների ու աղջիկների անատոմաֆիզիոլոգիական և հոգեբանական առանձնահատկությունները, ուսուցումը կազմակերպելու, միջոցների և մեթոդների ընտրության, շարժողական գործողությունները ուսուցանելու, շարժողական ընդունակությունները մշակելու և ֆիզիկական բեռնվածությունը չափավորելու ժամանակ պահանջվում են տարբեր մոտեցումներ:

- Օժանդակել դպրոցականերին նախապատրաստվելու կյանքին՝ ուսումնական, աշխատանքային գործունեության, բանակի ծառայության, աղջիկներին՝ մայրության:

- Ելնելով նպատակային ուղղվածությունից ապահովել անհրաժեշտ շարժողական և կիրառական պատրաստություն:

- Ապահովել դպրոցականների ընդհանուր ֆիզկուլտուրային կրթությունը:

- Ձևավորել առողջ ապրելակերպի, մասնավորապես վնասակար սովորությունների բացակայության վերաբերյալ կայուն դիրքորոշում:

4.1.ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑ

4.1.1. Կազմակերպչական աշխատանքներ.

Պրակտիկանտը պետք է ծանոթանա ֆիզիկական կուլտուրայի դասերի անցկացման առանձնահատկություններին, տնային և ինքնուրույն աշխատանքների առանձնահատկություններին, սպորտլանդիաների, սպորտային տոների նախապատրաստմանը և անցկացմանը, հոգեֆիզիկական առանձնահատկություններին հաշվառմանը:

4.1.2. Ֆիզկուլտուրային առողջարարական միջոցառումներ.

Ֆիզկուլտուրային առողջարարական միջոցառումները պետք է նպատակաուղղված լինեն՝ կեցվածքի ձևավորման, հարթաթաթության կանխարգելման, օրվա ռեժիմի պահպանման, համապատասխան սննդակարգի կալորիաների ընդունման, առավոտյան հիգենիկ մարմնամարզության իրականացման, ֆիզկուլտ դադարի անցկացման, կոփման սկզբունքների և կանոնների կիրառման, կարճատեսության կանխարգելման, մտավոր և ֆիզիկական աշխատունակության բարելավման, դիմադրողականության բարձրացման ոչ բարենպաստ պայմանների հանդեպ շարժողական ընդունակությունների (արագաշարժության, ճարպկության, ձկունության, ընդհանուր դիմացկունության, կորդինացիայի և այլն) մշակմանը:

4.1.3. Ուսումնադաստիարակչական աշխատանքներ.

Այս աշխատանքները ներառում են երեխաների հարմարվելը դպրոցին, ծնողների հետ տարվող աշխատանքը, մարզական կողմնորոշման համար համապատասխան աշխատանքների իրականացումը, աշակերտների հայեցի դաստիարակությունը, երեխաների մարդասիրական դաստիարակության իրականացումը՝ օլիմպիզմի գաղափարների կիրառմամբ, դաստիարակչական աշխատանքների պլանավորման համակարգի ուսումնասիրումը, արձակուրդների ժամանակ ֆիզիկական վարժություններով տանը զբաղվելու ինքնուրույն կարողություն ձևավորելը, ռազմահայրենասիրական դաստիարակության իրականացում շարժախաղերի միջոցով:

**ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑՈՒՄ ԿՐԹԱԿԱՆ, ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊՐԱԿՏԻԿԱՆՏԸ ՊԵՏՔ Է ԳԻՏԵՆԱ**

- օրվա ռեժիմի կատարման և անձնական հիգիենայի պահպանման կանոնների մասին,
- առողջության ամրապնդման գործում, ֆիզիկական վարժությունների դերն ու նշանակությունը,
- կոփման կանոնների և անձնական հիգիենայի պահպանման կարևորությունը,
- ֆիզիկական վարժությունների, շարժախաղերի անվանումները և կանոնները,
- օլիմպիական խաղերի և անվանի մարզիկների վերաբերյալ տեղեկություններ,
- մարմնամարզություն մարզաձևի մասին տեղեկություններ,
- աթլետիկա մարզաձևի մասին տեղեկություններ,
- դահուկային սպորտ մարզաձևի մասին տեղեկություններ,
- լող մարզաձևի մասին տեղեկություններ,
- շախմատ մարզաձևի մասին տեղեկություններ,
- շարժախաղերի մասին տեղեկություններ:

ՊԵՏՔ Է ԿԱՐՈՂԱՆԱ ՈՒՍՈՒՑԱՆԵԼ

- օրվա ռեժիմի պահպանման և անձնական հիգիենայի կանոնները,
- ինքնուրույն կատարելու առավոտյան հիգիենիկ մարմնամարզություն,
- կատարելու շարային հրամանները, շարափոխումները մեկ տողանից երկտողանի, միասյուն շարքից երկսյուն շարքի,
- կատարելու ընդհանուր զարգացնող վարժությունների համալիրներ առարկաներով և առանց առարկաների,
- վերլուծելու ընդհանուր զարգացնող համալիր վարժությունների հաջորդականությունը,
- մագլցել մարզանստարանի և մարզապատի վրայով,
- քայլել մարզանստարանի վրայով, ոտնաթաթի վրա, հավասարակշռության գերանի վրա, (1մ բարձրության) կատարել կից քայլեր, դարձումներ, կքանիստեր,
- կատարելու գլուխկոնժի առաջ, կանգ թիակների վրա և ընդունել «կամուրջ» դրությունը,
- կատարելու կախեր և հենումներ մարզապատի և մարզանստարանի վրա, ձգումներ կախ պառկած դրությունից,
- քայլել և վազել երաժշտության ռիթմին համապատասխան, կատարել կողադիր, փոփոխական, քառատրոփ քայլեր, ուստյուններ,

- «Քոչարի» պարի շարժումները,
- վազել 30 մ, դանդաղ վազել 6 րոպե, կրոսավազք կտրտված տեղանքում 2 կմ,
- թափավազքով հեռացատկել և բարձրացատկել,
- փոքր գնդակը նետել նշանակետին,
- խաղալ շարժախաղեր ճիշտ կանոններով, համաձայնեցնելով շարժումները և կողմնորոշվել տարածության մեջ,
- արագ և ճիշտ կողմնորոշվելու, կայացնել որոշումներ տարբեր իրավիճակներում: Ցուցաբերել նախաձեռնություն, համարձակություն, փոխօգնություն, արագաշարժություն,
- մազլցել, քայլել մարզանստարանի վրայով, գլորվել, մարզապատից կախ դրությունում՝ ոտքերը ծալել և ուղղել,
- ճիշտ քայլել, վազել 20մ, հավասարաչափ դանդաղ վազել 3 րոպե, տեղից հեռացատկել, բարձրացատկել, ցատկել ցատկապարանով, մեծ գնդակը նետել և բռնել,
- ինքնուրույն խաղալ շարժախաղեր, պահպանելով կանոնները,
- ինքնուրույն կազմել և կատարել ֆիզիկական վարժությունների համալիրներ,
- հստակորեն կատարել մարմնամարզական շարային, ակրոբատիկական, ռիթմիկ, պարային վարժությունները, կախերը և հենումները,
- արագացումով վազել 30մ, հաղթահարել արգելագոտին՝ ցուցաբերելով բարձր արդյունքներ,
- հեռացատկել և բարձրացատկել թափավազքով, փոքր գնդակը նետել նշանակետին և հեռավորության, ցուցաբերելով բարձր արդյունքներ,
- տարբեր իրավիճակներում ճիշտ կողմնորոշվել, որոշումներ կայացնել, ցուցաբերել համարձակություն, նախաձեռնություն, փոխօգնություն և համագործակցության կարողություններ,
- գիտակցել և արժևորել սեփական մարմնի խնամքը, առողջությանը հետևելու և ֆիզիկական վարժություններով սիստեմատիկ զբաղվելու կարևորությունը:

4.2. ՄԻՋԻՆ (ՀԻՄՆԱԿԱՆ) ԴՊՐՈՑ

4.2.1. Կազմակերպչական աշխատանքներ.

Պրակտիկանտը պետք է առաջնորդվի միջին դպրոցի ֆիզիկական կուլտուրայի դասերի անցկացման մեթոդիկայով, հաշվի առնելով սեռական հասունացման շրջանը,

տղաների և աղջիկների ֆիզիկական դաստիարակության մոտեցման յուրահատկությունները, արտադասարանական աշխատանքների կազմակերպման և անցկացման, տնային և ինքնուրույն աշխատանքների կատարման առանձնահատկությունները, մրցումների, սպորտլանդիաների, սպորտային տոների նախապատրաստման և անցկացման առանձնահատկություններին, ինչպես նաև հոգեֆիզիկական առանձնահատկությունների հաշվառմանը:

4.2.2. Ֆիզկուլտուրային առողջարարական միջոցառումներ.

Ֆիզկուլտուրային առողջարարական միջոցառումները պետք է նպատակաուղղված լինեն ճիշտ կեցվածքի ձևավորման, հարթաթաթության կանխարգելման, օրվա ռեժիմի պահպանման, համապատասխան սննդակարգի կալորիաների ընդունման, առավոտյան հիգենիկ մարմնամարզության իրականացման, ֆիզկուլտ դադարի անցկացման, կոփման սկզբունքների և կանոնների կիրառման, կարճատեսության կանխարգելման, մտավոր և ֆիզիկական աշխատունակության բարելավման, ոչ բարենպաստ պայմանների հանդեպ դիմադրողականության բարձրացման, առողջությանը հետևելու սովորության ձևավորման, շարժողական ընդունակությունների (ուժ, արագաշարժության, ճարպկության, ձկունության, ընդհանուր դիմացկունության, կոորդինացիայի և այլն) մշակմանը:

4.2.3. Ուսումնադաստիարակչական աշխատանքներ.

Այս աշխատանքները ներառում են ծնողների հետ աշխատանքը, սեփական առողջությանը հետևելու կարևորության գիտակցման ձևավորումը, առողջ ապրելակերպ վարելու սովորության ձևավորումը, վնասակար սովորություններից զերծ մնալը, զարգացնել հայեցի դաստիարակությունը, օլիմպիզմի գաղափարների կիրառմամբ երեխաների մարդասիրական դաստիարակության իրականացումը, դաստիարակչական աշխատանքների պլանավորման համակարգի ուսումնասիրումը, արձակուրդների ժամանակ ֆիզիկական վարժություններով տանը զբաղվելու ինքնուրույն կարողություն ձևավորելը, ռազմահայրենասիրական դաստիարակության իրականացումը, ֆիզկուլտուրա առարկայի քննությանը նախապատրաստվելը:

**ՄԻՋԻՆ (ՀԻՄՆԱԿԱՆ) ԴՊՐՈՑՈՒՄ ԿՐԹԱԿԱՆ, ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԵՎ
ԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊՐԱԿՏԻԿԱՆՏԸ ՊԵՏՔ
Է ԳԻՏԵՆԱ**

- Ֆիզիկական կուլտուրայի նշանակությունը անձի ներդաշնակ զարգացման գործում,
- Ֆիզիկական կուլտուրայի և առանձին մարզաձևերի, ինքնահսկողության, պարապմունքների ժամանակ անվտանգության կանոնների մասին,
- վնասակար սովորությունների կործանարար ազդեցության մասին,
- պատկերացում ունենա առողջ ապրելակերպի, օլիմպիական խաղերի նշանակության և «Արդարացի խաղի» մասին,
- մարզախաղերի տարբեր մարզաձևերի և դրանց կանոնների մասին,
- առողջության պահպանման համար, ֆիզիկական կուլտուրայով զբաղվելու անհրաժեշտությունը:

ՊԵՏՔ Է ԿԱՐՈՂԱՆԱ ՈՒՍՈՒՑԱՆԵԼ

- Կատարելու ընդհանուր զարգացնող վարժությունների մեկ համալիր, ազգային պարի շարժումներ, ցատկել մարմնամարզական այծի վրայով (60-100 սմ) մազլցել պարան, կատարել գլուխկոնձի առաջ և հետ,
- կատարելու կախեր և հենումներ. տղաները՝ պտտածողի վրա, կախ ծավված և արտակորված, կախ դրությունից ձգումներ, աղջիկները՝ կախ պառկած դրությունից՝ ձգումներ,
- վազել արագացումով 40մ, հավասարաչափ դանդաղ վազել 6 րոպե, թափավազքով հեռացատկել, բարձրացատկել (60-80սմ բարձր), փոքր գնդակը նետել նշանակետին և հեռավորություն,
- բասկետբոլիստի կեցվածքով տեղաշարժվել, գնդակը փոխանցել և ընդունել, վարել աջ և ձախ ձեռքով ուղղության և արագության փոփոխումով, նետել զամբյուղի մեջ տեղից և շարժման ընթացքում, խաղալ բասկետբոլ պարզեցված կանոններով,
- վոլեյբոլիստի կեցվածքով տեղաշարժվել, կատարել գնդակով փոխանցումներ երկու ձեռքով տեղում և շարժման մեջ, ցանցի վրայով, սկզբնահարված, ուղիղ հարձակողական հարված, խաղալ վոլեյբոլ պարզեցված կանոններով

- կատարելու հանդեպի գնդակի վարում, փոխանցում, նետում դարպասին, տուգանային նետում, խաղալ հանդեպ պարզեցված կանոններով,

- ֆուտբոլիստի կեցվածքով տեղաշարժվել, հարվածել անշարժ և գլորվող գնդակին ոտնաթաթի ներսի և ոտնաթաթի միջին մասով: Գլորվող գնդակը կասեցնել ոտնաթաթի ներսի և դրսի մասերով: Գնդակը վարել ոտնաթաթի ներսի մասերով: Խաղալ ֆուտբոլ պարզեցված կանոններով,

- ցուցաբերել բարություն, փոխօգնություն, ընկերասիրություն,

- կատարելու շարային հրամաններ, շարափոխում միասյուն շարքից քառասյուն շարքի, դարձումներ զույգերով, եռյակներով՝ ընթացքից,

- կատարելու ընդհանուր զարգացնող վարժությունների համալիրներ, տղաները՝ կցագնդերով, լցրած գնդակներով, աղջիկները՝ օղերով, գուրզերով,

- կատարելու կախեր և հենումներ. տղաները՝ պտտաձողի վրա վերելք ուժով, կախ ծավված, կախ արտակորված, կախ դրությունից ձգումներ, զուգափայտի վրա՝ ձեռքերի հենումից վերելք, առաջ և հետ թափին, հենում դրությունից ձեռքերի ծալում և ուղղում, հենում անկյունով, ոտքերը զատած նստած դրությունից կանգ ուսերին: Աղջիկները՝ մեկ ոտքի թափով և մյուսի հրումով վերելք շրջվելով ընդունելով հենում ցածր ձողին դրությունը,

- հենացատկել. տղաները՝ այծի վրայով «ոտքերը կծկած» եղանակով՝ 100-110 սմ բարձրությունը, նժույգի վրայով «ոտքեր զատած» եղանակով՝ 110-120 սմ բարձրությունը: Աղջիկները՝ ցատկ այծի վրայով «ոտքերը զատած» եղանակով՝ 100 սմ բարձրությունը,

- կատարելու տղաները՝ գլուխկոնժի առաջ, երկարությամբ, կանգ գլխի վրա, կանգ ձեռքերի վրա մրցակցի օգնությամբ: Աղջիկները՝ գլուխկոնժի հետ ընդունելով կիսալարան դրությունը,

- կատարելու ազգային «Քոչարի» և «Շալախո» պարի շարժումները,

- պարանամազլցել ձեռքերի և ոտքերի օգնությամբ տղաները՝ 3 մ, աղջիկները՝ 2,5 մ բարձրություն,

- վազել արագացումով 60մ, փոփոխական տեմպով 12-15 րոպե, կրոս՝ 1000 մ աղջիկներ, 2000մ տղաներ,

- բարձրացատկել «քայլանցում» եղանակով՝ տղաները 100-110 սմ, աղջիկներ 80-90 սմ բարձրություն,

- լցրած գնդակը /1կգ/ նետել տարբեր դիրքերից, փոխանցավազքի փայտիկը ճիշտ փոխանցել և ընդունել,

- բասկետբոլի գնդակը նետել զամբյուղի մեջ երկու քայլով, միջին և հեռու տարածությունից, կատարել տուգանային նետում, գնդակի դուրս հանում և խլում: Խաղալ բասկետբոլ մրցման կանոնների պահպանումով,

- վոլեյբոլի գնդակը փոխանցել ցանցի վրայով և ընդունել երկու ձեռքով, կատարել ցածից և վերին ուղիղ սկզբնահարված, ուղիղ հարձակողական հարված, միաժամանակ շրջափակումով ընդունել սկզբնահարվածը: Խաղալ վոլեյբոլ կանոնների պահպանումով,

- հանդբոլի գնդակով կատարել վարում, փոխանցումներ, նետում դարպասին՝ վերքևից շարժման մեջ, կանգառով, ցատկով, գնդակը որսալ և շրջափակել: Խաղալ հանդբոլ մրցման կանոնների պահպանումով,

- հարվածել ֆուտբոլի գլորվող գնդակին, ոտնաթաթի ներսի մասով և ոտնաթմբով, գնդակը վարել, կասեցնել ոտնաթաթով, կրծքով, խլել մրցակցից: Խաղալ ֆուտբոլ մրցման կանոնների պահպանումով,

- տարբեր իրավիճակներում կողմնորոշվել, որոշումներ կայացնել, համագործակցել,

- ինքնուրույն որոշել իր ֆիզիկական զարգացման մակարդակը,

- հստակորեն կատարել ծրագրով նախատեսված մարմնամարզական բոլոր վարժությունները,

- ինքնուրույն կազմել և կատարել ռիթմիկ մարմնամարզության վարժությունների համալիրներ,

- ճիշտ հեռացատկել, բարձրացատկել, վազել արագացումով 60 մ, փոփոխական տեմպով 15 րոպե, ցուցաբերելով բարձր արդյունքներ,

- մարզախաղերի ժամանակ ցուցաբերել տեխնիկական և տակտիկական գործողությունների հստակ կատարում,

- յուրացրած մարզախաղերի ժամանակ ցուցաբերել նախաձեռնություն, կազմակերպվածություն, ինքնատիրապետում, հանդուրժողականություն,

- տիրապետելու բազային շարժողական գործողությունների կատարման հմտություններին,

- հարգել ընկերոջը, օգնության հասնելու համար ցուցաբերել պատրաստակամություն, դժվարությունները հաղթահարելու կամք և հայրենասիրություն:

4.3.ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

4.3.1. Կազմակերպչական աշխատանքներ.

Պրակտիկանտը պետք է առաջնորդվի պատանիների և աղջիկների հոգեֆիզիկական առանձնահատկություններով, ինչպես նաև հաշվի առնի ավագ դպրոցի ֆիզիկական կուլտուրայի դասերի անցկացման մեթոդիկայի յուրահատկությունը, տղաների և աղջիկների ֆիզիկական դաստիարակության մոտեցման յուրահատկությունները, արտադասարանական աշխատանքների կազմակերպման և անցկացման, տնային և ինքնուրույն աշխատանքների առանձնահատկությունները, մրցումների, սպորտլանդիաների, սպորտային տոների նախապատրաստման և անցկացման առանձնահատկությունները:

4.3.2. Ֆիզկուլտուրային առողջարարական միջոցառումներ

Ֆիզկուլտուրային առողջարարական միջոցառումները պետք է ուղղված լինեն ճիշտ կեցվածքի պահպանման, հարթաթաթության կանխարգելման, օրվա ռեժիմի պահպանման, համապատասխան սննդակարգի կալորիաների ընդունման, առավոտյան հիգենիկ մարմնամարզության իրականացման, ֆիզկուլտ դադարի անցկացման, կոփման սկզբունքների և կանոնների կիրառման, կարճատեսության կանխարգելման, մտավոր և ֆիզիկական աշխատունակության բարելավման, ոչ բարենպաստ պայմանների հանդեպ դիմադրադակականության բարձրացման, ապահովել առողջությունը հետևելու կայուն սովորություն և շարժողական ընդունակությունների (ուժ, արագաշարժության, ճարպկության, ճկունության, ընդհանուր դիմացկունության, կոորդինացիայի և այլն) մշակում:

4.3.3. Ուսումնադաստիարակչական աշխատանքներ

Ուսումնադաստիարակչական աշխատանքները պետք է ուղղված լինեն առողջությունը պահպանելու կայուն սովորության ձևավորմանը, ծնողների հետ տարվող աշխատանքներին, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում սովորողների մասնագիտական կողմնորոշմանը, առողջ ապրելակերպ վարելու սովորության ձևավորմանը, զերծ մնալ վնասակար սովորություններից, զարգացնել հայեցի դաստիարակություն, մարդասիրական դաստիարակության իրականացումը օլիմպիզմի գաղափարների կիրառմամբ, դաստիարակչական աշխատանքների պլանավորման համակարգի ուսումնասիրմանը, ռազմահայրենասիրական դաստիա-

րակության իրականացմանը, դժվար դաստիարակվող երեխաների հետ աշխատանքների իրականացման առանձնահատկությունները, արձակուրդների ժամանակ ֆիզիկական վարժություններով տանը զբաղվելու ինքնուրույն կարողություն ձևավորելը, նախապատրաստել ֆիզկուլտուրա առարկայի ավարտական քննությանը:

**ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ ԿՐԹԱԿԱՆ, ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊՐԱԿՏԻԿԱՆՏԸ
ՊԵՏՔ Է ԳԻՏԵՆԱ**

- Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերը անձի համակողմանի զարգացման, աշխատանքային գործունեության, պատանիներին զինվորական ծառայության նախապատրաստման գործերում,
- ֆիզիկական վարժությունների ինքնուրույն կատարման ժամանակ ինքնավերահսկողության և անվտանգության կանոնները,
- մարզումների բեռնվածության, գերհոգնածության և կանխարգելման միջոցների վերաբերյալ տեղեկություններ,
- օլիմպիական շարժման գաղափարախոսության համամարդկային արժեքների, «Արդարացի խաղի», օլիմպիական խաղերին հայ մարզիկների մասնակցության մասին,
- առողջ ապրելակերպի վարման վերաբերյալ տեղեկություններ,
- մարզախաղերի կանոնները, վարել, փոխանցել և ընդունել՝ խաղընկերոջ ակտիվ դիմադրությամբ, կատարել նետումներ տարբեր հեռավորություններից, անհատական և խմբակային տակտիկական գործողություններ:

ՊԵՏՔ Է ԿԱՐՈՂԱՆԱ ՆՊԱՍՏԵԼ ԱՄՐԱՊՆԴԵԼՈՒ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Կատարել շարափոխում միասյուն շարքից երկսյուն, քառասյուն շարքի, ընդհանուր զարգացնող 10-12 վարժություններից կազմել համալիրներ,
- պատանիներ՝ կատարել գլուխկոնծի երկարությամբ, վարժություններ կցագնդերով, էսպանդերներով, պտտածողից կախ ծավված, արտակորված, ձգումներ, ուժով վերելք շրջումով: Հենացատկել 110սմ բարձրության, երկարությամբ տեղադրված նժույզի վրայից, պարանամագլցել ոտքերի օգնությամբ, վարժություններ մարզասարքերի վրա,

- աղջիկներ՝ կատարել ընդհանուր զարգացնող վարժություններ օդով, ժապավենով, ռիթմիկ մարմնամարզության համալիրներ, պառկած դիրքից կանգ թիակների վրա, վարժություններ մարզասարքերի վրա,

- ցածր մեկնարկից վազել 60մ, հավասարաչափ տեմպով վազել 6 րոպե, ճիշտ փոխանցել փոխանցավազքի փայտիկը, վազել 400մ՝ աղջիկներ, 800մ՝ տղաներ,

- հեռացատկել «Ոտքերը կծկած» և բարձրացատկել «Քայլանցում» եղանակներով,

- բասկետբոլի գնդակը վարել, փոխանցել և ընդունել՝ խաղընկերոջ ակտիվ դիմադրությամբ, կատարել նետումներ տարբեր հեռավորությունից, անհատական և խմբակային տակտիկական գործողություններ,

- կատարել վոլեյբոլի գնդակի փոխանցումներ վերից, ընդունում և փոխանցում ցածից երկու ձեռքով, սկզբնահարված, հարձակողական հարված, շրջափակում,

- հանդբոլի գնդակը փոխանցել և ընդունել եռյակներով, նետել դարպասին տարբեր դրություններից: Կատարել խաբուսիկ շարժումներ, անհատական և թիմային գործողություններ,

- կարողանալ հարվածել ֆուտբոլի թռչող գնդակին ոտնաթմբի միջին մասով և գլխով, կասեցնել ոտնաթաթով և կրծքով, կատարել խաբուսիկ շարժումներ,

- կատարել շարային հրամաններ, շարափոխում մեկ շարքից երկու, երեք և ութ շարքի, ընթացքում դարձումներ, ընդհանուր զարգացնող վարժությունների համալիրներ,

- պատանիներ՝ կարողանա կատարել գլուխկոնժի հետ և կանգ ձեռքերի վրա: Ուժային վարժություններ կցագնդերով, կշռաքարերով: Պտտածողից կախ դիրքում ծավվելով թափահարում, կախից վերելք շրջահենումով, դանդաղ վարցատկ: Պտտածողից կախ դրությունից ձգումներ: Հենացատկել երկարությամբ տեղադրված 120սմ բարձրության նժույգի վրայով: Կատարել վարժություններ մարզասարքերի վրա,

- աղջիկներ՝ կատարել ձկունության մշակման վարժություններ՝ գնդակով, օղակով, ցատկապարանով: Ռիթմիկ մարմնամարզական վարժությունների համալիրներ, կատարել գլուխկոնժի առաջ, ետ և «Կամուրջ» վարժությունը: Կատարել վարժություններ մարզասարքերի վրա,

- կարողանա ցածր մեկնարկից վազել 100մ, կատարել փոխանցավազք՝ 4X60մ, հավասարաչափ տեմպով վազել 10-12րոպե, կրոսավազք՝ 1500մ՝ աղջիկներ, 2000մ՝ տղաներ,

- կարողանա բասկետբոլի գնդակը վարել փոփոխական արագացումներով, նետել մեկ ձեռքով ուսի վրայից, կենտրոնից, աջ և ձախ կողմերից, կատարել տուգանային նետում, վահանից հետ թռչող գնդակի ընդունում, տակտիկական գործողություններ: Խաղալ բասկետբոլ մրցման կանոններով,

- վոլեյբոլի գնդակը ընդունել սկզբնահարվածից և փոխանցել 3-րդ գոտի, գնդակը ընդունել հարձակողական հարվածից հետո և փոխանցել ցատկով, կատարել հարձակողական հարված 2-րդ և 3-րդ գոտիներից, անհատական և խմբակային շրջափակում: Խաղալ վոլեյբոլ մրցման կանոններով,

- հանդբոլի գնդակը նետել հենված դրությունից, փոխանցել խաղահրապարակից գնդակի հետ ցատկով: Կատարել «խաչաձև» և «ությակով» շարժվելը, դիրքային հարձակումը, սահմանային պաշտպանությունը: Խաղալ հանդբոլ կանոններով,

- ֆուտբոլի գնդակին հարվածել գլխով` ցատկով և թափավազքով, գնդակը խլել մրցակցից ոտնաթաթը գնդակի վրա դնելով և ուս ուսի հրելով, սահանկումով, շրջանցել մրցակցին: Խաղալ ֆուտբոլ կանոններով,

- տարբեր իրավիճակներում որոշումներ կայացնել, հաղորդակցվել, համագործակցել: Ցուցաբերել արագ կողմնորոշվածություն, նպատակասլացություն, փոխօգնություն, ինքնավստահություն, ինքնատիրապետում, հարգանք խաղընկերոջ և ուրիշների նկատմամբ,

- ինքնուրույն կազմել և կատարել ռիթմիկ մարմնամարզական, ընդհանուր զարգացնող վարժությունների համալիրները, վարժություններ կատարել մարզասարքերի վրա` շարժողական ընդունակությունների մշակման ուղղվածությամբ,

- հստակորեն կատարել ծրագրային մարմնամարզական բոլոր վարժությունները,

- ինքնուրույն զբաղվել շարժողական ընդունակությունների մշակմամբ,

- ծրագրային աթլետիկական վարժությունները կատարել ցուցաբերելով բարձր արդյունքներ,

- յուրացրած մարզախաղերի ժամանակ ցուցաբերել կազմակերպվածություն, նախաձեռնություն, փոխօգնություն, հանդուրժողականություն, ինքնատիրապետում,

- դրսևորել տեխնիկական և տակտիկական գործողությունների ստեղծագործական կիրառում,

- կարողանալ ցուցաբերել պատրաստակամություն, պատասխանատվություն, ազնվություն, բարություն, հայրենասիրություն, մարդասիրական վարքագծի դրսևորում,

- տարբեր իրավիճակներում որոշումներ կայացնել, դրսևորել հասարակական ակտիվություն և նախաձեռնություն,

- պարբերաբար զբաղվել ֆիզիկական կուլտուրայով և սպորտով, ունենալ բարձր ֆիզիկական պատրաստվածություն,
- վերլուծել իր ֆիզիկական պատրաստվածության վիճակը, ունենալ ինքնահսկման և ինքնագնահատման հմտություններ:

5. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

5.1 Ավարտական և ինքնուրույն գիտական աշխատանքների կատարում.

Ավարտական և ինքնուրույն աշխատանքի թեմային համապատասխան պրակտիկայի ողջ ժամանակշրջանում գրական աղբյուրների ուսումնասիրում, հետազոտությունների կատարում, նյութերի հավաքագրում և մշակում:

6. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ

6.1. Մանկավարժական պրակտիկայի ժամանակ ինչ աշխատանքներ են կատարվել.

Հաշվետվության բովանդակությունում նշված է, թե ինչ աշխատանքներ է կատարել պրակտիկանոց մանկավարժական պրակտիկայի սկզբից մինչև ավարտը, ինչպես նաև հանդես է եկել նոր առաջարկություններով:

ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Պրակտիկայի ավարտին սահմանված ժամանակահատվածում ուսանողը հանձնում է պրակտիկանտի տետրը, որում ամփոփված են մանկավարժական պրակտիկայի ժամանակ նախատեսված և իրականացված բոլոր աշխատանքները: Բոլորնյան կրթական համակարգի համաձայն, մանկավարժական պրակտիկայի ժամանակ կատարած աշխատանքների և ձեռք բերած գիտելիքների ու կարողությունների հիման վրա, ուսանողը կարող է ստանալ գնահատականը`

- 90-100 միավոր (գերազանց` 5),
- 80-89 միավոր (լավ` 4),
- 60-79 միավոր (բավարար` 3),
- 40-59 միավոր` անբավարար ծրագրի կրկնության իրավունքով,
- 39-ից ցածր, անբավարար առանց ծրագրի կրկնության իրավունքի:

Պրակտիկայից հարգելի պատճառով բացակայած ուսանողներին և 40-59 միավոր հավաքած ուսանողին դեկանատը մասնագիտական ամբիոնի և պրակտիկայի բաժնի

հետ համատեղ որոշմամբ և հաստատված ժամանակացույցի պրակտիկայի անցման լրացուցիչ հնարավորություն է տալիս հաջորդ ուսումնական տարում կրկնելու ամբողջ կուրսը: Պրակտիկան անցկացվում է համաձայն մանկավարժական պրակտիկայի պայամանագրի, որտեղ նշվում է, որ անհրաժեշտության դեպքում դպրոցը պարտավորվում է հնարավորություն տալ ուսանողին կրկնելու պրակտիկայի ծրագիրը:

Մանկավարժական պրակտիկայի գնահատականը նշանակում է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի մանկավարժական պրակտիկայի մեթոդիստը ֆակուլտետի ղեկավարի հետ:

Պրակտիկայի գնահատականը իջեցվում է եթե.

- պրակտիկանտը պրակտիկայի ընթացքում ցուցաբերել է ոչ պարկեշտ պահվածք, չի հաճախել մեթոդիստի խորհրդրդատվությանը և չի ներկայացրել դասի և արդասարանական միջոցառման կոնսպեկտը, բացակայել է ուսումնական հաստատությունից անհարգելի պատճառով,

- ուսանող-պրակտիկանտի արտաքին տեսքը չի համապատասխանել հաստատության կարգավիճակին,

- խախտել է վարվելակերպի էթիկայի նորմերը,

- պրակտիկանտը սահմանված ժամկետում չի հանձնել անհրաժեշտ փասթաթղթերը:

1. Ուսանողը գնահատվում է 90-100 միավոր` գերազանց (5), եթե.

- Լիարժեք տիրապետում է ֆիզիկական դաստիարակության ժամանակակից տեխնոլոգիաներին:

- Ունի «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից կայուն, խոր տեսական գիտելիքներ:

- Կարողանում է կազմակերպել և անցկացնել արտադասարանական և ֆիզկուլտ-առողջարարական միջոցառումներ:

- Ուսանողի մոտ զարգացած է ներքոհիշյալ մասնագիտական կարողությունները.

ա) նախագծման`

- կարողանում է կազմել` ժամացանց, տարեկան պլան գրաֆիկ, թեմատիկ պլան գրաֆիկ և դասի կոնսպեկտ,

- կարողանում է կազմել սեկցիոն պարապմունքների, մարզական զանգվածային և ֆիզկուլտուրային առողջարարական միջոցառումների անցկացման պլաններ,

• վերը նշված աշխատանքների պլանավորման ժամանակ ցուցաբերում է նախաձեռնություն, ինքնուրույնություն և ակտիվություն,

բ) կառուցողական`

• կարողանում է որոշել և հիմնավորել ֆիզիկական կուլտուրայի դասի խնդիրները, դասի մասերի բովանդակությունը և դրանց փոխկապը,

• կարողանում է իրականացնել դաստիարակչական աշխատանքներ, համապատասխան բովանդակությամբ և ուղղությամբ,

գ) գործընթացային`

• կարողանում է ընտրել ֆիզիկական դաստիարակության համապատասխան միջոցներ, կիրառել անհրաժեշտ մեթոդներ, չափավորել բեռնվածությունը,

• ազատ տիրապետում է դասանյութին և մասնագիտական տերմինաբանությանը,

• ֆիզիկական վարժությունների ուսուցման ժամանակ կարողանում է բացահայտել առաջ եկած սխալները և կիրառել համապատասխան մեթոդներ այն շտկելու համար,

• կարողանում է ուսուցման ընթացքում կիրառել անվտանգության կանոններ,

• կարողանում է կազմել վարժությունների համալիրներ և անցկացնել նախապարապմունքային մարմնամարզություն, ֆիզկուլտ դադար, ֆիզիկական վարժություններ` երկարացված դասամիջոցներին,

• կարողանում է անցկացնել տեսական դասեր,

• կարողանում է անցկացնել սեկցիոն պարապմունքներ,

• կարողանում է անցկացնել մրցումներ տարբեր մարզաձևերից,

• կարողանում է անցկացնել սպորտլանդիաներ,

• կարողանում է նախապատրաստել և անցկացնել տուրիստական արշավներ,

• կարողանում է կազմակերպել և անցկացնել սպորտին նվիրված օրեր, ցերեկույթներ և վիկտորինաներ,

• տիրապետում է աշակերտների գիտելիքների, շարժողական կարողությունների և հմտությունների գնահատման չափանիշներին` նրանց բանիմացությանը համապատասխան գնահատական տալու համար,

դ) ճանաչողական`

• կարողանում է կատարել անցկացված ֆիզիկական կուլտուրայի դասի մանկավարժական վերլուծությունը,

• կարողանում է լիարժեք վարել կատարված աշխատանքների օրագիր,

• կարողանում է կազմել աշակերտների հոգեբանական բնութագիրը,

ե) հետազոտական`

- կարողանում է կիրառել հետազոտությունների տարբեր մեթոդներ,
- կարողանում է որոշել աշակերտների ֆիզիկական զարգացման որոշ ցուցանիշներ,

- կարողանում է կիրառել համապատասխան թեստեր և որոշել աշակերտների ֆիզիկական պատրաստվածության մակարդակը,

- կարողանում է մշակել և վերլուծել ստացված տվյալները,

զ) հաղորդակցական`

- կարողանում է համախմբել դասարանին,
- կարողանում է ընտրել համապատասխան շփման ոճ,
- կարողանում է ազատ և անկաշկանդ շփվել ծնողների հետ,
- կարողանում է իրականացնել քարոզչական աշխատանքներ,
- կարողանում է իրականացնել ֆիզիկական կուլտուրայի և սպորտային կողմնորոշման, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում մասնագիտական կողմնորոշման քարոզչական աշխատանքներ:

2. Ուսանողը գնահատվում է 80-89 միավոր` լավ (4), եթե.

- տիրապետում է ֆիզիկական դաստիարակության ժամանակակից տեխնոլոգիաներին:

- դրսևորում է ֆիզիկական կուլտուրա առարկայից տեսական գիտելիքներ, սակայն առանձին դեպքերում գիտելիքները կայուն չեն` տատանվում են:

- կարողանում է անցկացնել արտադասարանական և ֆիզկուլտուրային առողջարարական միջոցառումներ:

- ուսանողի մոտ զարգացած է մասնագիտական կարողությունները.

ա) նախագծային`

- կարողանում է կազմել` ժամացանց, տարեկան պլան գրաֆիկ, թեմատիկ պլան գրաֆիկ և դասի կոնսպեկտ, սակայն կան որոշ թերություններ,

- կարողանում է կազմել սեկցիոն պարապմունքների, մարզական զանգվածային և ֆիզկուլտուրային առողջարարական միջոցառումների անցկացման պլանները, սակայն կան որոշ թերություններ,

- վերը նշված աշխատանքների պլանավորման ժամանակ ցուցաբերում է որոշակի ինքնուրույնություն և ակտիվություն,

բ) կառուցողական`

- կարողանում է որոշել և հիմնավորել ֆիզիկական կուլտուրայի դասի խնդիրները, դասի մասերի բովանդակությունը և դրանց փոխկապը, սակայն նկատվում է որոշ դժվարություններ,

- կարողանում է իրականացնել դաստիարակչական աշխատանքներ, համապատասխան բովանդակությամբ և ուղղությամբ, սակայն նկատվում է որոշ թերություններ,

գ) գործընթացային՝

- կարողանում է ընտրել ֆիզիկական դաստիարակության համապատասխան միջոցներ, կիրառել անհրաժեշտ մեթոդներ, չափավորել բեռնվածությունը, սակայն կան որոշ անճշտություններ,

- ազատ տիրապետում է դասանյութին և մասնագիտական տերմինաբանությանը, սակայն նկատվում է որոշ կաշկանդվածություն,

- ֆիզիկական վարժությունների ուսուցման ժամանակ կարողանում է բացահայտել առաջ եկած սխալները և կիրառել համապատասխան մեթոդներ այն շտկելու համար, սակայն իրականացվում է որոշ բացթողումներով,

- կարողանում է ուսուցման ընթացքում կիրառել անվտանգության կանոններ, սակայն իրականացվում է որոշ թերություններով,

- կարողանում է կազմել վարժությունների համալիրներ և անցկացնել նախապարապմունքային մարմնամարզություն, ֆիզկուլտ դադարներ, ֆիզիկական վարժություններ երկարացված դասամիջոցներին, սակայն թույլ է տալիս որոշ կազմակերպչական թերություններ,

- կարողանում է անցկացնել տեսական դասեր, սակայն կան որոշ կազմակերպչական թերություններ,

- կարողանում է անցկացնել սեկցիոն պարապմունքներ, սակայն կան որոշ կազմակերպչական թերություններ,

- կարողանում է անցկացնել մրցումներ տարբեր մարզաձևերից, սակայն կան որոշ կազմակերպչական թերություններ,

- կարողանում է անցկացնել սպորտլանդիաներ, սակայն կան որոշ կազմակերպչական թերություններ,

- կարողանում է նախապատրաստել և անցկացնել տուրիստական արշավներ, սակայն կան որոշ կազմակերպչական թերություններ,

- կարողանում է կազմակերպել և անցկացնել սպորտին նվիրված օրեր, ցերեկույթներ և վիկտորիաններ, սակայն կան որոշ կազմակերպչական թերություններ,

• տիրապետում է աշակերտների գիտելիքների, շարժողական կարողությունների և հմտությունների գնահատման չափանիշներին՝ նրանց բանիմացությանը համապատասխան գնահատական տալու համար, սակայն կատարվում է որոշ թերություններով,

դ) ճանաչողական՝

• կարողանում է կատարել անցկացված ֆիզիկական կուլտուրայի դասի մանկավարժական վերլուծությունը, որոշ թերություններով,

• կարողանում է վարել կատարված աշխատանքների օրագիր,

• կարողանում է կազմել աշակերտների հոգեբանական բնութագիրը, որոշ թերություններով,

ե) հետազոտական՝

• կարողանում է կիրառել հետազոտությունների տարբեր մեթոդներ, որոշ թերություններով,

• կարողանում է որոշել աշակերտների ֆիզիկական զարգացման որոշ ցուցանիշներ, որոշ թերություններով,

• կարողանում է կիրառել համապատասխան թեստեր և որոշել աշակերտների ֆիզիկական պատրաստվածության մակարդակը, որոշ թերություններով,

• կարողանում է մշակել և վերլուծել ստացված տվյալները, որոշ թերություններով,

զ) հաղորդակցական՝

• կարողանում է համախմբել դասարանին, որոշ թերություններով,

• կարողանում է ընտրել համապատասխան շփման ոճ, որոշ թերություններով,

• կարողանում է շփվել ծնողների հետ, որոշ թերություններով,

• կարողանում է իրականացնել քարոզչական աշխատանքներ, որոշ թերություններով,

• կարողանում է իրականացնել ֆիզիկական կուլտուրայի և սպորտային կողմնորոշման, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում մասնագիտական կողմնորոշման քարոզչական աշխատանքներ, որոշ թերություններով:

3. Ուսանողը գնահատվում է 60-79 միավոր՝ բավարար (3), եթե.

• տիրապետում է կրթության և ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներին՝ թերություններով:

• դրսևորում է ֆիզիկական կուլտուրա առարկայից տեսական գիտելիքներ, սակայն գիտելիքները կայուն չեն՝ տատանվում են:

- կարողանում է անցկացնել արտադասարանական և ֆիզկուլտուրային առողջարարական միջոցառումներ՝ թերություններով:

- Ուսանողի մոտ մասնագիտական կարողությունները զարգացած են ոչ բավարար մակարդակով.

- ա) նախագծման՝

- կարողանում է կազմել՝ ժամացանց, տարեկան պլան գրաֆիկ, թեմատիկ պլան գրաֆիկ և դասի կոնսպեկտ, սակայն կան թերություններ,

- կարողանում է կազմել սեկցիոն պարապմունքների, մարզական զանգվածային և ֆիզկուլտուրային առողջարարական միջոցառումների անցկացման պլանները, սակայն կան թերություններ,

- վերը նշված աշխատանքների պլանավորման ժամանակ չի դրսևորում նախաձեռնություն, ինքնուրույնություն և ակտիվություն,

- բ) կառուցողական՝

- կարողանում է որոշել և հիմնավորել ֆիզիկական կուլտուրայի դասի խնդիրները, դասի մասերի բովանդակությունը և դրանց փոխկապը, սակայն նկատվում է դժվարություններ,

- կարողանում է իրականացնել դաստիարակչական աշխատանքներ, համապատասխան բովանդակությամբ և ուղղությամբ, սակայն նկատվում է թերություններ,

- գ) գործընթացային՝

- կարողանում է ընտրել ֆիզիկական դաստիարակության համապատասխան միջոցներ, կիրառել անհրաժեշտ մեթոդներ, չափավորել բեռնվածությունը, սակայն կան թերություններ,

- տիրապետում է դասանյութին և մասնագիտական տերմինաբանությանը, սակայն նկատվում է շփոթմունք,

- ֆիզիկական վարժությունների ուսուցման ժամանակ կարողանում է բացահայտել առաջ եկած սխալները, կիրառել համապատասխան միջոցներ և մեթոդներ այն շտկելու համար, սակայն իրականացվում է թերություններով,

- կարողանում է ուսուցման ընթացքում կիրառել անվտանգության կանոններ, սակայն իրականացվում է թերություններով,

- կարողանում է կազմել վարժությունների համալիրներ և անցկացնել նախապարապմունքային մարմնամարզություն, ֆիզկուլտ դադարներ, ֆիզիկական

վարժություններ երկարացված դասամիջոցներին, սակայն իրականացվում է թերություններով,

- կարողանում է անցկացնել տեսական դասեր, սակայն իրականացվում է թերություններով,

- կարողանում է անցկացնել սեկցիոն պարապմունքներ, սակայն իրականացվում է թերություններով,

- կարողանում է անցկացնել մրցումներ տարբեր մարզաձևերից, սակայն իրականացվում է թերություններով,

- կարողանում է անցկացնել սպորտլանդիաներ, սակայն իրականացվում է թերություններով,

- կարողանում է կազմակերպել և անցկացնել տուրիստական արշավներ, սակայն կան որոշ կազմակերպչական թերություններ,

- կարողանում է կազմակերպել և անցկացնել սպորտին նվիրված օրեր, ցերեկույթներ և վիկտորինաներ, սակայն իրականացվում է թերություններով,

- տիրապետում է աշակերտների գիտելիքների, շարժողական կարողությունների և հմտությունների գնահատման չափանիշներին՝ նրանց բանիմացության համապատասխան գնահատական տալու համար, սակայն իրականացվում է թերություններով,

դ) ճանաչողական՝

- կարողանում է կատարել անցկացված ֆիզիկական կուլտուրայի դասի մանկավարժական վերլուծությունը՝ թերություններով,

- կարողանում է վարել կատարված աշխատանքների օրագիր, որոշ թերություններով,

- կարողանում է կազմել աշակերտների հոգեբանական բնութագիրը՝ թերություններով,

ե) հետազոտական՝

- կարողանում է կիրառել հետազոտությունների տարբեր մեթոդներ, սակայն թերություններով,

- կարողանում է որոշել աշակերտների ֆիզիկական զարգացման որոշ ցուցանիշներ (հասակ, քաշ, կրծքավանդակի շրագիծ)՝ թերություններով,

- կարողանում է կիրառել համապատասխան թեստեր և որոշել աշակերտների ֆիզիկական պատրաստվածության մակարդակը, թերություններով,

- կարողանում է մշակել և վերլուծել ստացված տվյալները, որոշ թերություններով,

զ) հաղորդակցական՝

- կարողանում է համախմբել դասարանին՝ թերություններով,
- կարողանում է ընտրել համապատասխան շփման ոճ՝ թերություններով,
- կարողանում է շփվել ծնողների հետ՝ թերություններով,
- կարողանում է իրականացնել քարոզչական աշխատանքներ՝ թերություններով,
- կարողանում է իրականացնել սպորտային կողմնորոշման, ֆիզիկական կուլտուրայի և սպորտային կողմնորոշման, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում մասնագիտական կողմնորոշման քարոզչական աշխատանքներ՝ թերություններով:

4 Ուսանողը գնահատվում է 59 և ցածր միավոր՝ անբավարար (2), եթե.

- չի տիրապետում կրթության և ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներին:
- չունի ֆիզիկական կուլտուրա առարկայից տեսական գիտելիքներ:
- չի կարողանում անցկացնել արտադասարանական և ֆիզկուլտուրային առողջարարական միջոցառումներ:

- Ուսանողի մոտ զարգացած չէ մասնագիտական կարողություններ.

ա) նախագծման՝

- դժվարանում է կազմել ժամացանց, տարեկան պլան գրաֆիկ, թեմատիկ պլան գրաֆիկ և դասի կոնսպեկտ,

- դժվարանում է կազմել սեկցիոն պարապմունքների, մարզական զանգվածային և ֆիզկուլտուրային առողջարարական միջոցառումների անցկացման պլան,

- վերը նշված աշխատանքների պլանավորման ժամանակ չի դրսևորում նախաձեռնություն, ինքնուրույնություն, ակտիվություն և չի կարողանում կատարել նույնիսկ օգնության դեպքում,

բ) կառուցողական՝

- դժվարանում է որոշել և հիմնավորել ֆիզիկական կուլտուրայի դասի խնդիրները, դասի մասերի բովանդակությունը և դրանց փոխկապը,

- դժվարանում է իրականացնել դաստիարակչական աշխատանքներ, համապատասխան բովանդակությամբ և ուղղությամբ,

գ) գործընթացային՝

- դժվարանում է ընտրել ֆիզիկական դաստիարակության համապատասխան միջոցներ, կիրառել անհրաժեշտ մեթոդներ, չափավորել բեռնվածությունը,

- չի տիրապետում դասանյութին և մասնագիտական տերմինաբանությանը,

- ֆիզիկական վարժությունների ուսուցման ժամանակ չի կարողանում է բացահայտել առաջ եկած սխալները, չի կարողանում կիրառել համապատասխան միջոցներ և մեթոդներ այն շտկելու համար,

- կարողանում է ուսուցման ընթացքում կիրառել անվտանգության կանոններ, էական թերություններով,

- կարողանում է կազմել վարժությունների համալիրներ, սակայն նախապարապնունքային մարմնամարզությունը, ֆիզկուլտ դադարները, ֆիզիկական վարժությունները երկարացված դասամիջոցներին իրականացվում է էական թերություններով,

- չի կարողանում անցկացնել տեսական դասեր,

- չի կարողանում անցկացնել սեկցիոն պարապնունքներ,

- չի կարողանում անցկացնել մրցումներ տարբեր մարզաձևերից,

- չի կարողանում անցկացնել սպորտլանդիաներ,

- չի կարողանում կազմակերպել և անցկացնել տուրիստական արշավներ,

- չի կարողանում կազմակերպել և անցկացնել սպորտին նվիրված օրեր, ցերեկոյթներ և վիկտորինաներ,

- չի տիրապետում աշակերտների գիտելիքների, շարժողական կարողությունների և հմտությունների գնահատման չափանիշների՝ նրանց բանիմացության համապատասխան գնահատական տալու համար,

դ) ճանաչողական՝

- չի կարողանում վերլուծել անցկացված ֆիզիկական կուլտուրայի դասի մանկավարժական վերլուծությունը,

- կարողանում է վարել կատարված աշխատանքների օրագիր, էական թերություններով,

- դժվարանում է կազմել աշակերտների հոգեբանական բնութագիրը,

ե) հետազոտական՝

- չի կարողանում կիրառել հետազոտությունների տարբեր մեթոդներ,

- դժվարանում է որոշել աշակերտների ֆիզիկական զարգացման որոշ ցուցանիշներ (հասակ, քաշ, կրծքավանդակի շրջագիծ),

- չի կարողանում կիրառել համապատասխան թեստեր և որոշել աշակերտների ֆիզիկական պատրաստվածության մակարդակը,

- չի կարողանում մշակել և վերլուծել ստացված տվյալները,

զ) հաղորդակցական՝

- չի կարողանում համախմբել դասարանին,
- չի կարողանում ընտրել համապատասխան շփման ոճ,
- չի կարողանում շփվել ծնողների հետ,
- չի կարողանում իրականացնել քարոզչական աշխատանքներ,
- չի կարողանում իրականացնել սպորտային կողմնորոշման, ֆիզիկական կուլտուրայի և սպորտային կողմնորոշման, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում մասնագիտական կողմնորոշման քարոզչական աշխատանքներ:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ուսանող-պրակտիկանտի գործունեության գնահատման համար կիրառվում են հետևյալ մեթոդները`

- ուսանողների կողմից պրակտիկայի ընթացքում կատարած դիտումների և առանձին աշխատանքների վերլուծություն,
- գրույցներ ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների, դասղեկների, աշակերտների հետ,
- ուսանողների կողմից կատարված աշխատանքների (անցկացրած դասերի, բազմաբնույթ դաստիարակչական աշխատանքների, մարզական զանգվածային և ֆիզկուլտուրային առողջարարական) վերլուծություն,
- գործնական և տեսական աշխատանքի ինքնագնահատում,
- ուսանողների պրակտիկայի փաստաթղթերի (կատարված և պահանջվող փաստաթղթերի) վերլուծություն:

ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՆԱՅԻՆ ԵՎ
ՄԻԱՎՈՐԱՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱԼԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՈՒՍԱՆՈՂԻ ԱՄՓՈՓԻՉ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ	ՈՒՍԱՆՈՂԻ ԱՄՓՈՓԻՉ ՄԻԱԿՈՐԸ
Գերազանց	90 -100
Լավ	80 - 89
Բավարար	60 -79
Անբավարար՝ ծրագրի կրկնության իրավունքով	40 - 59
Անբավարար՝ առանց ծրագրի կրկնության իրավունքի	39-ից ցածր

**ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱԿՈՐԱՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ
ՀԱՄԱԿԱՐԳԸ**

ՈՒՍԱՆՈՂԻ ԱՄՓՈՓԻՉ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ	ՄԻԱԿՈՐԸ	ՆՇԱՆԱԿՈՒՄԸ
Գերազանց	95 -100	A+
	90 - 94	A
Լավ	85 - 89	B+
	80 - 84	B
Բավարար	70 - 79	C+
	60 - 69	C
Անբավարար՝ ծրագրի կրկնության իրավունքով	40 - 59	F
Անբավարար՝ առանց ծրագրի կրկնության իրավունքի	39 - ից ցածր	Fx

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԻ, ԲԱԼԱՅԻՆ ԵՎ ՄԻԱԿՈՐԱ-ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

N	Ուսանողի կողմից իրականացվող ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲԱՂԱՐՈՒՉՆԵՐԸ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԲԱԼԱՅԻՆ ԵՎ ՄԻԱԿՈՐԱ-ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ				ՊԱՀԱՆՋՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ	ՊԱՀԱՆՋՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻԱԿՈՐԸ
		անբավ (2) 0-59	բավ. (3) 60-79	լավ. (4) 80-89	գեր. (5) 90-100		
1	ՀԱՃԱՆՈՒՄ						10
2	ԳԻՏԵԼԻՔՆԵՐ (ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ)						50
	Ժամացանց					2	2
	Տարեկան պլան գրաֆիկ					2	3
	Թեմատիկ պլան գրաֆիկ					2	5
	Գործնական և տեսական դասի կոնսպեկտներ					14	10
	Գործնական և տեսական դասերի անցկացում					14	20
	Դասի մանկավարժական վերլուծություն և բեռնվածության որոշում					1	4
	Ինքնուրույն պարապմունքների անցկացման մեթոդիկայի ուսուցում					4	2
	Դպրոցականների ֆիզիկական պատրաստության և ֆիզիկական զար- գացման որոշում և գնահատում					1	3
	Հանրակրթական առարկաների դասալսում					4	1
3	ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ (ԱՐՏԱՂԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ)						25
Սեկցիոն պարապմունքների կամ սպորտայնացված դասերի կազմակերպում (կոնսպեկտ)					1	2	
Սեկցիոն պարապմունքների կամ սպորտայնացված դասերի անցկացում					1	3	
Առողջ ապրելակերպի դասի					1	2	

	կազմակերպում (կոնսպեկտ)						
	Առողջ ապրելակերպի դասի անցկացում					1	3
	Մրցումների կազմակերպում և անցկացում (տարբեր մարզածներից)					2	5
	Սպորտլանդիանների կազմակերպում և անցկացում					1	6
	Ֆիզկուլտուրային առողջարարական միջոցառումների կազմակերպում և անցկացում՝						4
	Ֆիզկուլտ դադար					4	1
	նախապարապմունքային մարմնամարզություն					4	1
	շարժախաղեր և ֆիզիկական վարժություններ մեծ դասամիջոցներին					4	1
	ցերեկոյանների, վիկտորինանների, սպորտի օրերի					1	1
4	ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ (ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿ- ՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ)						15
	ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ						13
	Տուրիստական արշավների կազմակերպում և անցկացում					1	4
	Քարոզչական աշխատանքների իրականացում					ընթացքում	4
	Աշակերտների հոգեբանական բնութագիրը					1	2
	Օրագրի վարում և հաշվետվության կազմում					40 - 1	2
	Մասնակցություն ծնողական ժողովներին					1 կամ 2	1
	ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ						
	Մասնակցություն մանկավարժական պրակտիկայի ներգրավիչ և ամփոփիչ կոնֆերանսներին					2	
	Ծանոթանալ պրակտիկայի բաժնի, գործնական ամբիոնների և գրադարանի կողմից պատրաստված պրակտիկայի անկյունի բովանդակությանը					ընթացքում	2

Մանրամասն ուսումնասիրել մանկավարժական պրակտիկայի ծրագիրը, մանկավարժական պրակտիկայի ժամանակ պահանջվող բոլոր փաստաթղթերը և պրակտիկանտի տետրը					ընթացքում
Մասնակցել պրակտիկային վերաբերվող բոլոր միջոցառումներին					ընթացքում
Հանդիպում դպրոցի տնօրենի և մանկավարժական կոլեկտիվի հետ					ընթացքում
Հանդիպում դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցչի (ների) հետ					ընթացքում
Հանդիպում ամրացված դասարանի դասղեկի հետ					ընթացքում
Հանդիպում դպրոցի բուժաշխատողի հետ					ընթացքում

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Առաքելյան Վ.Բ., Ղազարյան Ֆ.Գ., Գրիգորյան Յ. Գ., Մինասյան Հ. Ս., Հարությունյան Ա.Ա. ֆիզիկական կուլտուրա 1-4 ընդ դասարաններ. Ուսուցչի ձեռնարկ Եր.«Աստղիկ գրատուն», 2008թ.-184 էջ:
2. Առաքելյան Վ.Բ., Ղազարյան Ֆ.Գ., Գրիգորյան Յ. Գ., Հարությունյան Ա.Ա. ֆիզիկական կուլտուրա 2 ընդ դասարանի դասագիրք Եր.«Աստղիկ գրատուն», 2009թ.-128 էջ:
3. Առաքելյան Վ.Բ., Բաբայան Հ.Ա., Հարությունյան Ա.Ա. Օլիմպիական խաղերի ուսումնական նյութերի ժողովածու. Ե.: Դրագարկ հրատ., 2005.-68 էջ
4. Առաքելյան Վ.Բ., Բաբայան Հ.Ա., Հարությունյան Ա.Ա. Օլիմպիական խաղեր. օլիմպիզմ. օլիմպիական գաղափարներ յուրաքանչյուրին 6-9 տարեկանների համար. Երևան: Դրագարկ հրատ., 2005 թ.-42 էջ
5. Առաքելյան Վ.Բ., Սադյան Բ.Զ. Սամբո ըմբշամարտ- ուսումնական ձեռնարկ.-Երևան.-2007:
6. Առաքելյան Վ.Բ., Մելիքսեթյան Ռ.Տ., Մելքոնյան Կ.Ա. - Ծրագիր հանրակրթական դպրոցում մանկավարժական պրակտիկայի-Երևան 1999թ, 18 էջ:
7. Ազիզյան Գ.Ն., Վանեսյան Հ.Մ. Ծանրամարտ.-Ուսումնական ձեռնարկ.-Երևան. ՖԿՀՊԻ.-2004.-392 էջ
8. Ասմարան Կ. Վոլոյբով.- Ուսումնական ձեռնարկ.-Երևան.-ՖԿՀՊԻ.-2007թ, 176 էջ:
9. Աշակերտների ֆիզիկական դաստիարակության համալիր ծրագիր հանրակրթական դպրոցի 1-10-րդ դասարանների.-Երևան.-2003:
10. Բաց զվարճալի ֆուտբոլի դպրոցներ.-Երևան.- 2006:
11. Բաբայան Հ. Դպրոցականների գեղագիտական դաստիարակությունը ֆիզիկական դաստիարակության գործընթացում.-Երևան.-«Ջանգակ 97».-2000:
12. Բաբայան Մ.Ա. Շարքը և շարային վարժությունները ֆիզիկական կուլտուրայի պարապմունքներում.-Երևան.-1981:
13. Բոյախյան Փ.Ե. Մարմնամարզության կիրառական վարժություններ դպրոցահասակ երեխաների համար.-Երևան.-2005:
14. Գրիգորյան Ա.Ա. Ֆուտբոլ. պատանի ֆուտբոլիստների պարապմունքների կազմակերպման առանձնահատկությունները.-Երևան.-2005:
15. Եղիազարյան Ա. Ըմբշամարտը դպրոցում.-Երևան
16. Հակոբյան Ս., Չատինյան Ա. Ֆուտբոլ.-Երևան.-ՖԿՀՊԻ.-2005:
17. Իսախրյան Մ.Ս. Հայերը և հայաստանցիները օլիմպիական խաղերում: Երևան, 1999
18. Իսախրյան Մ.Ս. Հայաստանը և հայերը օլիմպիական շարժման ոլորտում, Երևան 2000թ.
19. Ծրագիր բակավարժի կրթական ծրագրի մանկավարժական մասնագիտությունների մանկավարժական պրակտիկայի-Երևան 2009թ.-28 էջ
20. Ղազարյան Ֆ.Գ. Դպրոցականների շարժողական հատկությունների մշակման առանձնահատկությունները ֆիզիկական կուլտուրայի դասերին: Երևան, 1981:

21. **Ղազարյան Ֆ.Գ.** Մարդու ֆիզիկական վիճակի մոնիթորինգը, Երևան, ՖԿՀՊԻ.- 2007.-215 էջ:
22. **Մամաջանյան Վ.Ս.** Աթլետիկա-Ուսումնական ձեռնարկ-Երևան-Սոս և Վոլվա-2003թ.-187էջ:
23. **Մեհրաբյան Ա.** Ֆիզիկական կուլտուրան դպրոցում (մեթոդական ձեռնարկ): Երևան, 2005:
24. **Մելիքսեթյան Ռ.Տ.** Ֆիզկուլտուրային-առողջարարական աշխատանքը դպրոցում.- Երևան.Լույս, 1984:
25. **Մելիքսեթյան Ռ.Տ., Մեհրաբյան Ա.Ռ.** Ֆիզիկական կուլտուրա: Դասագիրք հանրակրթական դպրոցի 1-3-րդ դասարանների համար, Երևան.- Լույս, 1993
26. **Մելիքսեթյան Ռ.Տ.** Տեսական գիտելիքների ուսուցումը ֆիզիկական կուլտուրայի դասերին: Երևան, Լույս, 1991.-169 էջ.
27. **Մելքոնյան Հ.** Հանդիմանը դպրոցում: Ուսումնական ձեռնարկ: Երևան, 2003 թ.
28. **Մելքոնյան Հ.** Մարզախաղերի կանոնները: Եր.-2007թ.
29. **Նահապետյան Ս.Ս.** Ընդհանուր զարգացնող վարժություններ.-Երևան.- Լույս.-1988
30. **Պողոսյան Ա.Վ.** Մանկավարժական պրակտիկական հանրակրթական դպրոցում-Երևան 2008թ.-38էջ.
31. **Սամվելյան Լ.Ա.** Սպորտը և արդարացի խաղը.-Եր.: Տնտեսագետ.-2006.-96 էջ:
32. **Սաֆարյան Ի.Գ.**Լողի ուսուցման և մարզման մեթոդիկա: Ուսումնական ձեռնարկ: Երևան.- 2008թ.-205 էջ:
- 33.**Ստեփանյան Ա.Գ., Ենգոյան Ս.Ա.** Տնային հանձնարարությունները «Ֆիզիկականկուլտուրա» առարկայից, -Ուսումնամեթոդական ձեռնարկ.-Երևան.-2007.-82 էջ:
34. **Վարդյան Ա.** Շարժախաղեր.-Երևան.-2007.-160 էջ:
35. **Գրիգորյան Յու., Մինասյան Հ.** Ֆիզիկական կուլտուրա առարկայի չափորոշիչ և ծրագիր 1-12-րդ դասարանների համար, Երևան 2007թ. 144 էջ
36. **Кочман А.Г.** и др. Книга учителя физической культуры.-М.: ФиС.-1999.
37. **Еркомайшвили И.В., Жукова О.Л.** Педагогическая практика по физической культуре в школе: Учебно-методическое пособие Екатеринбург: ГОУ ВПО УГТУ-УПИ, 2004. 88 с.
38. **Физическая культура в школе-** II журнал 2000-2009г.
39. **Кузнецов В.С, Колодницкий Г.А.** Методика обучения основным видам движений на уроках физической культуры в школе.-М.: Гуманит. изд.центр ВЛАДОС, 2003. - 176 с.
40. **Лювомирский Л.Е.,Мейксон Г.Б.,Лях В.И.,**Физическая культура-М.:Просвещение,1997.-112 с.
41. **Матвеев А.П.,** Петров Т.В. Оценка качества подготовки выпускников основной школы по физической культуре.- М.: Дрофа, 2000. 160 с..
42. **Бальсевич В.К.** Перспективы развития общей теории и технологий спортивной подготовки и физического воспитания (методологический аспект) // Теория и практика физ. культуры. 1999, № 4, с. 21 - 26, 39 - 40.
43. **Бальсевич В.К., Лубышева Л.И., Прогонюк Л.Н. и др.** Новые векторы модернизации систем массового физического воспитания детей и подростков в общеобразовательной школе // Теория и практика физ. культуры. 2003, № 4, с. 56 - 59.

44. Кумицкая Т.М. Мастер-класс для заместителей директора по воспитательной работе: Организация и планирование работы. М.: 5 за знания, 2006.

ԲՈՎԱՆԱԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
Մանկավարժական պրակտիկայի նպատակը.....	6
Մանկավարժական պրակտիկայի խնդիրները.....	7
Մանկավարժական պրակտիկայի կազմակերպման սկզբունքները.....	7
Մանկավարժական պրակտիկայի բազաները և կազմակերպումը.....	8
Մանկավարժական պրակտիկայի անցկացման կարգը.....	9
Մանկավարժական պրակտիկայի անցկացման տևողությունը.....	9
Մանկավարժական պրակտիկային մասնակցող ուսանողների պարտականությունները.....	9
Մանկավարժական պրակտիկայի խմբի ղեկավարի (մեթոդիստի) պարտականությունները.....	10
Մանկավարժություն և հոգեբանություն դասավանդող դասախոսների պարտականությունները.....	11
Դպրոցի ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի պարտականությունները.....	11
Մանկավարժական պրակտիկայի (ֆակուլտետի) ղեկավարի պարտականությունները.....	11
Մանկավարժական պրակտիկայի ժամերի բաշխումը ըստ բաժինների և թեմանների.....	13
Մանկավարժական պրակտիկայի բաժինների և թեմանների կատարման ժամկետները.....	15
Մանկավարժական պրակտիկայի ընդհանուր դրույթները.....	17
1. ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ.....	17
1.1. Մասնակցություն մանկավարժական պրակտիկայի ներգրավիչ և ամփոփիչ կոնֆերանսների..	17
1.2. Ծանոթանալ պրակտիկայի բաժնի, գործնական ամբիոնների և գրադարանի կողմից պատրաստված պրակտիկայի անկյունի բովանդակության հետ.....	17
1.3 Մանրամասն ուսումնասիրել մանկավարժական պրակտիկայի ծրագիրը, մանկավարժական պրակտիկայի ժամանակ պահանջվող բոլոր փաստաթղթերը և պրակտիկանտի տետրը.....	17
1.4. Մասնակցել մանկավարժական պրակտիկայի վերաբերվող բոլոր միջոցառումներին.....	17
1.5. Հանդիպում դպրոցի տնօրենի հետ.....	17
1.6. Հանդիպում դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցչի (ների) հետ.....	18
1.7. Հանդիպում ամրացված դասարանի դասղեկի հետ.....	18
1.8 Հանդիպում դպրոցի բուժաշխատողի հետ.....	19
2. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ.....	19
2.1. Փաստաթղթերի կազմում.....	19
2.2. Դասերի դիտում և անցկացում.....	20
2.3. Դասի մանկավարժական վերլուծություն.....	20
2.4. Արտադասարանական պարապմունքների կազմակերպում և անցկացում.....	21
2.5. Մարզական զանգվածային աշխատանքների կազմակերպում և անցկացում (սպորտլանդիաներ, մրցումներ և այլ մարզական տոնակատարություններ).....	22

2.6. Ֆիզկուլտուրային առողջարարական միջոցառումների կազմակերպում և անցկացում.....	22
2.6.1.Նախապարապմունքային մարմնամարագության անցկացում ամրացված դասարանում.....	22
2.6.2.Ֆիզկուլտ րոպեի անցկացում.....	23
2.6.3.Շարժախաղեր և ֆիզիկական վարժություններ՝ երկարացված դասամիջոցներին.....	23
2.6.4.Ամենօրյա ֆիզկուլտուրային պարապմունքներ՝ երկարօրյա խմբերում.....	24
2.6.5.Ամենամսյա առողջության և սպորտի օրեր.....	24
2.7. Հանրակրթական առարկաների դասալսում.....	24
2.8. Տեսական դասերի անցկացում՝ կոնսպեկտի ձևով.....	25
2.9. Սպորտայնացված դասերի անցկացում՝ սեկցիոն պարապմունքների ձևով.....	25
2.10.Առողջարարական խնդիրներ ունեցող երեխաների պարապմունքների ծանոթացում և դիտում: Աշակերտների բժշկական զննման քարտի ուսումնասիրում.....	25
2.11. Ինքնուրույն պարապմունքների անցկացման մեթոդիկայի դասավանդում.....	28
2.12.Դպրոցականների ֆիզիկական պատրաստվածության և ֆիզիկական զարգացման որոշում և զննահատում՝ դպրոցի հնարավորության սահմաններում.....	28
2.13.Ուսուցիչ - պրակտիկանտի նախապատրաստվելը դասին.....	28
3. ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ.....	29
3.1 .Կազմել աշակերտների հոգեբանական բնութագրերը.....	29
3.2 . Ուսումնասիրել ամրացված դասարանի դաստիարակչական աշխատանքները.....	30
3.3 . Մասնակցել ծնողական ժողովներին.....	30
3.4 Բաց դասերի անցկացում (տեսական և գործնական, առողջ ապրելակերպի հետ կապված).....	30
3.5 Համաաշխարհային առողջության օրվան նվիրված միջոցառման նախապատրաստում և տոնում (ապրիլի 7-ին).....	30
3.6 Տուրիստական արշավների կազմակերպում և անցկացում.....	30
3.7 Քարոզչական աշխատանքների կազմակերպում և անցկացում.....	32
4. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՐՏՆԵՐ, ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ.....	32
4.1Կրտսեր դպրոց.....	35
4.1.1.Կազմակերպչական աշխատանքներ.....	35
4.1.2.Ֆիզկուլտուրային առողջարարական միջոցառումներ.....	35
4.1.3.Ուսումնադաստիարակչական աշխատանքներ.....	35
Կրտսեր դպրոցում կրթական, դաստիարակչական և առողջարարական խնդիրների իրականացման համար պրակտիկանտը	
• Պետք է գիտենա.....	35
• Պետք է կարողանա ուսուցանել.....	36
4.2 Միջին (հիմնական) դպրոց.....	37

4.2.1. Կազմակերպչական աշխատանքներ.....	37
4.2.2. Ֆիզկուլտուրային առողջարարական միջոցառումներ.....	38
4.2.3. Ուսումնադաստիարակչական աշխատանքներ.....	38
Միջին դպրոցում (հիմնական) կրթական, դաստիարակչական և առողջարարական խնդիրների իրականացման համար պրակտիկանտը	
• Պետք է գիտենա.....	39
• Պետք է կարողանա ուսուցանել.....	39
4.3 Ավագ դպրոց.....	42
4.3.1. Կազմակերպչական աշխատանքներ.....	42
4.3.2. Ֆիզկուլտուրային առողջարարական միջոցառումներ.....	42
4.3.3. Ուսումնադաստիարակչական աշխատանքներ.....	42
Ավագ դպրոցում կրթական, դաստիարակչական և առողջարարական խնդիրների իրականացման համար պրակտիկանտը	
• Պետք է գիտենա.....	43
• Պետք է կարողանա նպաստել ամրապնդելու հետևյալ կարողությունները.....	43
5. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ.....	46
5.1. Ավարտական և ինքնուրույն գիտական աշխատանքների կատարում.....	46
6. ՀԱՇՎԵՏԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ.....	46
6.1 Մանկավարժական պրակտիկայի ժամանակ ինչ աշխատանքներ են կատարվել.....	46
ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ.....	46
ՍԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԸ.....	56
• Մանկավարժական պրակտիկայի գնահատման բալային համակարգը.....	57
• Մանկավարժական պրակտիկայի գնահատման միավորա-վարկանիշային համակարգը.....	58
• Մանկավարժական պրակտիկայի գնահատման չափանիշների բալային և միավորա-վարկանիշային համակարգերի կիրառումը.....	59
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	62